



ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՍԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄԵԿՎՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐԹ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գեղարքունիքի մարզոչին և մարզային իշխանությունների ներկայացուցիչներին



Նույսի 5-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում ընդունեց ՀՀ Գեղարքունիքի մարզային իշխանությունների ներկայացուցիչներին՝ գլխավորությամբ մարզպետ Գնել Սամոսյանի եւ ուղեկցությամբ Գեղարքունիքի թեմի առաջնորդական տեղապահ Պարթև վրդ. Բարսեղյանի։

Հայր Պարթևը, Նորին Սրբությանը ներկայացնելով հյուրերին, իր երախտագիտությունը հայտնեց Վեհափառ Հայրապետին՝ թեմի հանդեպ ցուցաբերված հայրական հոգատարության եւ համավարակի հետևանքները մեղմելու նպատակով Մայր Աթոռի կողմից մարզի սոցիալապես անապահով խավի շուրջ 600 ընտանիքի պա-

րենային օգնություն տրամադրելու համար։ Հայր սուրբը հաստատեց նաեւ, որ մարզային ու թեմական բոլոր կառույցների միջեւ առկա է արդյունավետ գործակցություն՝ ի խնդիր մարզի զարգացման եւ բնակչության բարօրության։

Այնուհետեւ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սամոսյան իր շնորհակալությունը հայտնեց Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ ջերմ ընդունելության համար։ Մարզպետն ուրախությամբ արձանագրեց, որ մարզի ու թեմի միջեւ առկա է սերտ փոխգործակցություն՝ կարելու էլ թեմի հոգևորականների՝ մարզի բնակչության հոգևոր կյանքի ամրապնդմանն ուղղված գործունեությունը։ Պրն Սամոսյանը կարեւոր նկատեց նաեւ Հայոց Եկեղեցու դերակա-

տարությունը պետականաշինության գործում։ Գեղարքունիքի մարզպետը նաեւ Նորին Սրբությանը տեղեկություններ փոխանցեց մարզում իրականացվող տնտեսական, սոցիալական եւ մշակութային ծրագրերի վերաբերյալ։

Հայրապետական իր օրհնությունը փոխանցելով հյուրերին՝ Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գոհունակություն հայտնեց թեմի ու մարզպետարանի միջեւ հաստատված գործակցային հարաբերությունների համար, որոնք ըստ Վեհափառ Հայրապետի՝ պիտի նպաստեն մարզի ազգաբնակչության բարօրությանը։ Նորին Սրբությունը հավաստիացրեց, որ Մայր Աթոռը շարունակելու է իր աջակցությունը ցուցաբերել մարզում առկա սոցիալական

դժվարությունների եւ համավարակի հաղթահարման համար։ Հայոց Հովվապետը գնահատանքով անդրադարձավ մարզային իշխանությունների կողմից թեմի եկեղեցիների, վանական համալիրների ու պատմամշակութային վայրերի պահպանմանը, վերանորոգմանն ու բարեկարգմանը դարձվող ուշադրությանը։ Այս խնաստով Հայոց Հայրապետը փաստեց, որ հոգևոր կյանքի ամրությունը նպաստում է ժողովրդի բարօրությանն ու առաջընթացի կերտմանը։

Վերջում Նորին Սրբությունը մարզի պատասխանատուներին մաղթեց Աստծու օրհնությունն ու օգնականությունը՝ իրենց առաքելության իրականացման գործում՝ ի նպաստ մարզի շենացման, բարգավաճման ու հզորացման։

Երեսնյա հավաքը գորակցություն է հայտնում Հայոց բանակին

Նույսի 13-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի ունեցավ երեսնյա հավաքը։

Ժողովին թեմական առաջնորդներն ու Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսներն անդրադարձան հուլիսի 12-ից սկսվող աղբյուրաբանական զինված ուժերի կողմից ՀՀ Տավուշի մարզի ուղղությամբ արձանագրված հրադարարի խախտումներին եւ ներթափանցման փորձերին։

«Ստահողությամբ տեղեկացանք Աղբյուրաբանի կողմից Հայաստանի հյուսիսային սահմանների նկատմամբ կատարված հերթական ոտնձգության մասին, որի հետևանքով կան տուժած հայ զինծառայողներ։ Անըմբռնելի է Աղբյուրաբանի ղեկավարության ռազմատենչ կեցվածքը համընդհանուր այս համավարակի պայմաններում։

Դատապարտում ենք հակառակորդի կողմից մեր երկրի նկատմամբ դրսևորված ագրեսիան եւ հրավիրում միջազգային հանրությանը առարկայական ու համարժեք գնահատականներով կանխելու ռազմական գործողությունների հնարավոր



ծավալումները եւ դրանց հետագա կրկնությունը։

Աղթելով աղբյուրաբանական կողմի սադրիչ գործողությունների հետևանքով տուժած մեր զավակների շուտափույթ ապաքինման համար՝ մեր գորակցությունն ենք բերում ՀՀ իշխանություններին, Հայոց հաղթական բանակի մեր զինվորներին եւ սահմանամերձ բնակավայրերի մեր քաջարի զավակներին՝ մաղթելով ամրություն ու

արիության ոգի՝ դիմագրավելու համար հակառակորդի հարձակումներն ու նկրտումները։

Աղթում ենք, որ խաղաղությունն անվրդով մնա մեր տարածաշրջանում, եւ մեր ժողովուրդը շարունակի բնականոն կյանքի իր ընթացքը», — ասված է ուղերձում։

Ժողովականները նաեւ քննության առան համավարակի պայմաններում Մայր Աթոռի եւ թեմերի կողմից ձեռնարկված քայլերը

եւ կարիքավոր ընտանիքներին ի նպաստ իրականացվող աջակցության ծրագրերը։

Այս առնչությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարեւոր նկատեց նաեւ, որ հոգևոր հովիվների կողմից լուսաբանական աշխատանքներ իրականացվեն՝ զորավիգ լինելու պատկան կառույցներին համավարակի կանխարգելման գործողություններում՝ հորդոր ուղղելով ժողովրդին խստորեն հետեւելու պարետատան կողմից սահմանված առողջապահական կանոններին եւ դրսևորելու հանրային բարձր գիտակցություն։

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց նաեւ ՀՀ Հանրակրթության պետական չափորոշիչի նախագծին եւ դրա վերաբերյալ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կրթական հարցերով ենթախմբի դիրքորոշմանը, որի շրջանակներում պետական պատկան մարմիններին հորդոր է ուղղվել հիմնովին վերատեստության ենթարկել փաստաթուղթը՝ նկատի առնելով վերջինիս մեջ տեղ գտած հայեցակարգային էական բացթողումները։ Խորհրդակցության ընթացքում որոշում կայացվեց հետեւել այս ուղղությամբ ընթացող զարգացումներին եւ նկատի առնել սույն հարցը հետագա հանդիպումների քննարկումներում։

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի անդրադարձը Սուրբ Սոֆիայի ժամար-թանգարանը մզկիթի վերածելու Թուրքիայի իշխանությունների որոշման առիթով

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ցավով արձանագրեցինք տակավին մի քանի օր առաջ՝ հուլիսի 10-ին, Թուրքիայի Հանրապետության նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի կողմից Օրթոդոքս Եկեղեցիների եւ քրիստոնեական աշխարհի համար կարեւոր մշակութային ունեցող Սուրբ Սոֆիայի տաճարը թանգարանից մզկիթի վերածելու որոշումը: Հակառակ համաքրիստոնեական տարբեր կազմակերպությունների, եկեղեցապետների ու քաղաքական առաջնորդների կոչերին՝ թուրքական կառավարությունն ընդունեց միակողմանի ու դատապարտելի որոշում՝ դրանով իսկ խախտելով Թուրքիայում ազգային կրոնական փոքրամասնությունների

իրավունքները: Ցավով ենք նշում, որ միլիոնավոր քրիստոնյաների կոչերն ու անհանգստություններն անտեսվեցին, հաշվի չառնվեց նույնիսկ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Սուրբ Սոֆիայի տաճարը համաշխարհային մշակութային զանազանությունների փառքը:

Թուրքիայի կառավարության գործողությունը ծանր հուշեր է արթնացնում դարեր շարունակ Օսմանյան իշխանությունների կողմից հայ ժողովրդի, ինչպես նաեւ այլ քրիստոնյա ազգերի սրբատեղիների պղծման ու կործանման վերաբերյալ: Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ու հայ ժողովուրդը, որպես Օսմանյան Թուրքիայում Ցեղասպանու-

թյուն վերապրած ժողովուրդ, կիսում է օրթոդոքս եղբայրների եւ քույրերի ցավն ու անհանգստությունը: Հայոց եկեղեցին դատապարտում է քաղաքական շահերից ելնող՝ կրոնների փոխըմբռնման ու երկխոսության գործընթացին մեծապես վնասող Թուրքիայի կառավարության որոշումը՝ միաժամանակ կոչ անելով վերանայել այն ու վերադառնալ Թուրքիայում տարբեր կրոնական համայնքների խաղաղ աղոթական համակեցության սկզբունքին: Պատմության վայրիվերումների ու քաղաքական փոփոխությունների ընթացքում Սուրբ Սոֆիայի տաճարը, պատմական եւ մշակութային արժեքից զատ, ձեռք է բերել նաեւ տարբեր կրո-

նական, մշակութային եւ քաղաքական մշակութային դառնալով ոչ թե քաղաքակրթությունների բախման, այլ համագործակցության եւ մարդկության միասնության խորհրդանիշ:


Միակողմանի այդ որոշման պատճառով ստեղծված դժվարին այս իրավիճակում աղոթքով զորակից ենք Կոստանդնուպոլսի Տիեզերական պատրիարք, մեր սիրեցյալ եղբայր Նորին Սրբություն Բարդուղիմեոս պատրիարքին եւ Օրթոդոքս Եկեղեցու մեր քույրերին ու եղբայրներին:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

ՆՈՅ ՆԵՇԵՊԵՏ. պարսկ-թյուրք, բէ առապել

Աստվածաշնչի համաձայն՝ համաշխարհային ջրհեղեղից հետո Նոյ մահապետի Արարատ լեռան վրա հանգրվանելու, հայկական ավանդության համաձայն՝ Նախիջեւանում հետջրհեղեղյան առաջին բնակավայրը հիմնելու մասին հիշատակված են ոչ միայն հայկական (Վարդան Աշխարհագիր), այլեւ հունական (Եվսեբիոս Կեսարացի), հրեական (Հովսեփոս Փլավիոս) եւ այլ սկզբնաղբյուրներում: Ուշագրավ է, որ ոչ միայն հայերս ենք Նոյի իջեւանատեղի Նախիջեւանը «առաջին իջեւան» կոչել, այլեւ հույներն են Ապվատերիոն՝ «իջեւան, իջեւանատեղի» անվանել: Հայ պատմիչների վկայությամբ՝ հնագույն հայկական այդ քաղաքում է գտնվել Նոյի գերեզմանը, իսկ նրա կնոջ գերեզմանը՝ մերձակա Մարանդ քաղաքում, որոնք հազարամյակներ շարունակ սրբավայրեր են եղել ինչպես քրիստոնյա, այնպես էլ մահմեդական եւ հուդայական ուխտավորների համար:

Սակավ հետաքրքրական չեն նաեւ մեզ հասած ազգագրական-բանահյուսական նյութերը, ավանդությունները: Աստվածաշնչյան վկայությունը հաստատում են նաեւ ժողովրդական բանավոր ավանդագրույցները, մասնավորապես՝ նախիջեւանցիների



Նոյ մահապետի դամբարան-մատուռը Նախիջեւանում

կերը, առաջին խաղողի այգին աճեցրել: Եվ անհիշելի ժամանակներից այդ գյուղը կոչվել է Ագարակ (ինչպես հայտնի է, հայերենում ագարակ բառը առաջին հերթին ունի «մշակվող հող, կալվածք» մշանակությունը): Գյուղը հետագայում դարձել է ադրբեջանական եւ ամենեւին էլ ոչ պատահաբար կրել Ղարաբաղլար անունը (բառացի՝ «սեւ այգիներ»): Ամենագրամալիկն այն է, որ պահպանվել է նաեւ աղբյուրի անվան բարբառային ձեւը՝ Ասոն ախպուր կամ Ասոն ախպուր, որն

սիսում), Մարանդը (քաղաք եւ գավառ պատմական Վասպուրական աշխարհի հյուսիսում, Նախիջեւան քաղաքից ոչ հեռու, որտեղ, ինչպես մշվեց, գտնվում է Նոյի կնոջ գերեզմանը՝ «Մար անդ» («այնտեղ է մայրը») սրբավայրը) եւ այլն:

Այսպիսով՝ հնաբնակ նախիջեւանցիների սերնդեսերունդ փոխանցված հիշողությունը նույնպես վկայում է, որ Նոյ մահապետի ջրհեղեղյան պատմությունը իրողություն է:

Ուսումնասիրողները Նախիջեւան տեղանվան ստուգաբանության տարբեր վարկածներ են առաջարկում: Հրաշյա Աճառյանը կապում է հայերեն նախնի («որս, կոտորած») եւ ավան բառերի հետ, այսինքն՝ բառացի ստուգաբանվում է որպես «որսատեղի, որսավան» մանավանդ, որ քաղաքը գտնվում է Արաքսի հովտում, եւ նրա մերձակայքը պատմականորեն հայտնի է եղել որպես մշակավոր որսատեղի: Շուկե-րագետ Արմեն Դավթյանը տեղանվան առաջին արմատը համարում է գրաբարի նախնի («որս-վայն, փոր») բառը, որը նույնպես հնարավոր տարբերակ կարող է համարվել հաշվի առնելով տարածքի՝ Արաքս գետի գոգավոր հովտում տեղադրված լինելու հանգամանքը, ինչպես նաեւ պատմականորեն փոր, փուս, ձոր եւ մնացած արմատներով աշխարհագրական անունների առա-

ծել է նաեւ Գեւորգ Զահուկյանը՝ կապելով հյուսիսկովկասյան մախյան ցեղերի նախնի նախն ցեղանվան հետ («նախնի ավան»), որը համեմատելի է չեչենների նախն ինքնանվանման հետ: Վաղիմիր Մինորսկին նույնպես Նախիջեւանը դիտում է որպես Գուրջիկան («վրացիների ավան, վայր»), Քուրդիկան («քրդերի ավան, վայր») եւ մնացած այլ տեղանունների համաբանությամբ անհայտ ցեղանուն եւ հայ-իրանական ավան (վան) արմատը կրող կազմություն: Հայերիս Հյուսիսային էլ հակված է եղել տեղանունը դիտել որպես հայերեն ավան բառից եւ հարցականով Նախի՞ճ կամ Նախու՞ճ հատուկ անունից կազմված բարդություն («Նախի՞ճի կամ Նախու՞ճի ավան»):

Հայագիտության մեջ գրեթե անվերապահորեն ընդունված է այս տեղանվան նախնական ձեւ համարել Նախնականը (Նախնական), իսկ Նախիջեւանը՝ ժողովրդական ստուգաբանությամբ նրանից ածանցյալ տարբերակ: Սակայն, բնականաբար, հարց է առաջանում. եթե առկա են համաշխարհային ջրհեղեղը իրողություն համարելու որոշակի հիմքեր, ինչպես նաեւ Հովսեփոս Փլավիոսի հիշատակած Ապվատերիոն-իջեւան ձեւը, միթե հնարավոր չէ տեղանվան նախնական ձեւ համարել Նախիջեւանը, իսկ Նախնականն ընդունել որպես վերջինիս հնչյունափոխված ձեւ:

Պարզվում է, որ տարածքի տեղաբնիկ բարբառների ընձեռած նյութը հնարավորություն է տալիս չբացառելու նաեւ այս վարկածը: Այսպես, պատմական Նախնական գավառի եւ մերձակա տարածքի մի շարք տեղաբնիկ բնակավայրերի խոսվածքներում (Աստապատ, Այլապատ, Կարմիր վանք, Ազնաբերդ, Օծոփ եւ այլն) առկա է բնականվան Նախնական ձեւը, որտեղ, ըստ երեւոյթին, տեղի է ունեցել կից բա-



Ագարակ (Ղարաբաղլար) գյուղի Ս. Խաչ վանքի ավերակները


ավանդությունները: Տարեց նախիջեւանցիների վկայությամբ նույնպես Նոյի գերեզմանը Նախիջեւանի՝ իր հիմնադրած քաղաքի պարիսպներին մերձակա հին գերեզմանատանն է եղել, որտեղ թաղված է եղել նաեւ Նոյեմզարը՝ Նոյի քույրը կամ դուստրը: Նոյի գերեզմանի վրա անհիշելի ժամանակներից մատուռ-դամբարան է կառուցված եղել, որն ավերվել է 1930-ական թվականներին, գերեզմանի տեղը տասնամյակներ շարունակ վերածված է եղել քարակույտների:

Նոյի պատմության արժանահավատությունն է հավաստում նաեւ Նախիջեւանի տեղաբնիկ գյուղերից մեկում՝ Ազնաբերդում (պատմական Նախնական գավառի տարածք) պահպանված մի ավանդագրույց, ըստ որի՝ գյուղի արեւմտյան բլուրներից դեպի հարեւան Ղարաբաղլար գյուղը տանող ճանապարհի մոտ գտնվող հիմնավոր, հորդառատ աղբյուրը կառուցել է Նոյի ավագ որդի Սեմը՝ ջուրը տեղ հասցնելով լեռներից քարաշեն խողովակներով: Այս աղբյուրի ջրով էլ Նոյը ջրել է իր տնկած որթատուն-

ամենայն հավանականությամբ՝ բխում է Սեմայ աղբիւր գրաբարյան ձեւից: Աղբյուրի մասին հիշատակել է նաեւ Դեոնոդ Ալիշանը՝ իր «Սիսական» աշխատության մեջ:

Նոյ մահապետի եւ ջրհեղեղյան պատմության լուռ վկան է նաեւ Օձասարը կամ Վիշապասարը՝ նախիջեւանցիների խորհրդանիշ կարոտի լեռը, որ գտնվում է Գողթն գավառի մատույցներում, եւ որի մասին բազմաթիվ ավանդագրույցներ են մեզ հասել: Զրույցներից մեկի համաձայն՝ Նոյ մահապետի տապանը գիշերով անցել է այս լեռան վրայով եւ, բախվելով նրա կատարի սուրսայր ժայռերին, վնասվել է: Նախապետը սաստիկ զայրացել է անհիժել է լեռը: Ասում են՝ անեծքից է լեռան կատարը երկփեղղ դարձել, եւ այնտեղ բազմաթիվ օձեր են բնակություն հաստատել: Այդ օրերից էլ լեռը կոչվել է Օձասար կամ Վիշապասար:

Ջրհեղեղի հետ են կապվում նաեւ տարածքի մի շարք այլ աշխարհագրական անուններ, որոնցից են Տապանասարը կամ Նավասարը (լեռ Գողթն գավառի հյու-




Վիշապասար

ղաձայների փոխազդեցական հնչյունափոխություն, եւ արդյունքում շփականից եւ հպականից կազմված զույգը բառամիջում վերածվել է խուլ շփականից եւ խուլ հպականից կազմված զույգի:

Շարունակությունը՝ էջ 4

ՑՈՐԱԿԱՆ ՏԵՐՅԱՆԸ

Տերյանի ծննդյան 135-ամյակի եւ մահվան 100-րդ տարելիցի առիթով



Սկիզբը՝ թիվ 2—12

Թ.

Բանաստեղծական շարքերը

Տերյանի պոեզիայի քնարական դիպաշարն անհատի ողբերգությունն է մեծ աշխարհում: Դա նախ երազանքներով լեցուն մուրք հոգու բախումն է բիրտ իրականությանը: Դա էլ անձնական ողբերգություն է (ընտանիք, առողջություն), եւ քաղաքական (սկզբում ԴՅԴ-ի անդամ, հետո՝ սպեցիֆիկ, վերջում՝ կոմունիստ), եւ ազգային (հայոց ողբերգությունը, աշխատանքը ազգությունների խորհրդում, Թուրքահայաստանի մասին օրինագծի նախագիծը, մասնակցությունը Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցություններին, աշխատակցությունը Լենինի եւ Ստալինի հետ, վերջին ուղևորությունը):

Այս ամենով՝ Տերյանը շատ հանգուցային դեմք է, ուստի շարունակենք մեր դիտարկումները:

Յրեղեն սյունի պես ամուր ու վառվռում մի բանաստեղծություն ունի, որ Ողիսեսի դարձի մեծան շրջադարձ է դեպի հայրենի արժեքները եւ վերադարձ հայրենի տուն: Այստեղ երեակայությունն ավելի իրական է, իրականությունը՝ ավելի երեակայական: Տերյանը մտավոր թռիչքի մեջ է՝ արտաերկրային, անկշռելի, եւ այդ թռիչքն այս է.

*Թողի երկիրն իմ հայրենի
Անահ անցա Արաբ ու Դինդ,
Տեսա մարդիկ չորսգլխանի,
Տեսա հազար աղետ ու խինդ:
Հասա մինչեւ Զինումաշին,
Հասա մինչեւ ծովը ճերմակ,
Տեսա երկրի ծայրը վերջին*

*Եվ դրախտի դուռը կրակ:
Հազար անգամ ծագեց արեւ
Եվ մայր մտավ հազար անգամ,
Տեսա ծառեր հըրատերեւ,
Տեսա ակունքն արեգական
Եվ փերիններ քնքուշ ու սեւ,
Աչքերը՝ բոց, իրենք՝ խավար,
Եվ փերիններ տեսա թեթեւ
Փրփուրի պես ճերմակ ու վառ:
Բոլորը՝ ծովս, բոլորն՝ ավազ,
Բոլորն՝ ավար ջուր ու քամուն,
Չըկա՛ր քեզնից գերիշ երա՛զ,
Քո անունից անո՛ւշ անուն...*

Այո, Ողիսեսի կերպարի խորհուրդն է՝ թափառումներից հետո մեծ դժվարությամբ վերադարձ դեպի հայրենի երկիր... Հունական դիցաբանության, առասպելաբանության անդրադարձներ հանդիպում են նաեւ ավելի հեշտ ընկալելի ակնարկներում, ինչպես «Պաոլոյին» բանաստեղծության մեջ, որտեղ Պաոլոն՝ իր ընկեր, քննադատ, խորհրդային ժամանակներում նաեւ հայտնի քաղաքական գործիչ Պողոս Մակինցյանը, պատկերվում է որպես հայացքը հեռուն հառած «մի նոր Յազուն...»: Սա այն Յազ(ս)ունն է, որը Կոլխիդայից պիտի բերեր Ոսկե գեղը, որի ամուսնությունը Մեղեայի հետ ողբերգական ավարտ պիտի ունենար...

Իսկ հայրենի դարձի միտումներն արտահայտվել են նաեւ «Լինեի չորան սարերում հեռու», «Հովիվներն այնտեղ կրակ են արել», «Հովիվներն ազատ հեռու սարերում», «Երբ կիզեն, ինձ տարեք երկիրն իմ հեռու», «Երանի մրան, ով հայրենական // Խաղաղ հարկի տակ հանգչում է հիմա», «Դրեք սիրտս դարավոր // Հարազատ օրրան» բանաստեղծություններում:

Հայրենի եզերքը դառնում է փրկության ափ: Ահա իր կերպարն այդ ճանապարհին.

*Յոգնեցի գրքերից անհամար,
Աշխարհից այս խավար ինձ տարեք,
Ինձ տարեք այս երկրից անարեգ:*

*Ինձ տարեք մեր դաշտերը պայծառ,
Մեր սարերն անառիկ, վեհանիստ,
Մեր արտերն արեւոտ ու հանգիստ...*

*Փրկեցեք մտքերից այս անծայր,
Փրկեցեք խոսքերից այս խելոք,
Դարձրեք ինձ մանուկ եւ անհոգ:*

*Փրկեցեք սրերից այս սուրսայր,
Խորախոց խոհերից իմաստուն,
Մեր սարերը տարեք, տարեք տուն...*

Այս մտայնությունը շարունակվում է նաեւ «Այս հին ու նոր գրքերի վրա կորացած...» տողով սկսվող բանաստեղծության մեջ: Ասում ենք՝ եթե անգամ Աստված չկա, պետք է ստեղծել Աստծու կերպարը՝ որպես մարդկության ներքին ազատությունը կատարելագործող վերերկրյա ուժ: Իսկ Աստված կա, եւ ամեն ոք ունի իր Աստվածը, որ մույնն է ու հասանելի է բոլորին, որովհետեւ բոլորի մեջ է:

Ասում ենք՝ ապահերոսացված ժամանակներ են: Եթե անգամ այդպես է, ապա գրողները պարտավոր են ստեղծել այդ հերոսին: Եթե հերոսը չկա, ուրեմն չկա նաեւ գրողը: Իսկ ես այն կարծիքին եմ, որ այդ հերոսը կա: Ի վերջո, իրականությունն ունի իր գլխավոր հատկանիշերը, որոնք ունեն նաեւ իրենց կրողները: Հերոսը այդ հատկանիշերի կրողն է:

Շարունակությունը՝ էջ 6, 7

ՀՈՎՀԱՆԵՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՅՈՒ «ՊԼՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿԻ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԸ

Սկիզբը՝ թիվ 11—12

Դարձվածաբանությունը՝ որպես լեզվաբանական առանձին գիտաճյուղ, երիտասարդ է, բայց դարձվածքը՝ որպես լեզվական երևույթ, շատ հին ավանդույթներ ունի: Նրա արմատները հասնում են դարերի խորքը: Դարձվածային միավորները հիմնականում ժողովրդական պատկերավոր մտածողության արդյունք են, դրանք նախ՝ առաջանում են լեզվում, ապա անցնում գրական տարբերակին: Սակայն դարձվածային միավորները չեն ծագում լեզվի ծագման հետ միասին: Մարդու մտածողության ու կենսափորձի զարգացման ավելի բարձր մակարդակում, երբ մարդն ի վիճակի է եղել վերացարկում կատարելու, բաներին արդեն նոր իմաստներ է տվել եւ իր մտքերն ավելի արտահայտիչ, դիպուկ ու տպավորիչ դարձնելու համար կազմել է նաեւ այնպիսի բառազուգորդումներ, երբ կապակցության բաղադրիչները գործածվում են իրենց ոչ ուղիղ, այլ փոխաբերական իմաստներով (*տես Բաղիկյան Խ., Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երևան, 1986, էջ 47*): Փոխվում է ամբողջ կապակցության իմաստը, այն ձեռք է բերում բոլորովին նոր իմաստ, որը շատ հաճախ չի բխում առանձին բաղադրիչների իմաստների զումարից: Երբեմն այդ վերաիմաստավորված կայուն բառակապակցությունների՝ դարձվածքների արտահայտած իմաստն այնքան հեռու է լինում իր բաղադրիչների նախնական իմաստից, որ մույնիսկ անհնար է դառնում կատարել դարձվածքի ստուգաբանական վերլուծություն կամ որոշել, թե ով, որտեղ, ինչ համագամանքներում է առաջին անգամ գործածել տվյալ դարձվածքը:

Պ. Բեդիրյանն իր «Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն» գրքում դիտարկում է կապակցության՝ դարձվածք դառնալու ուղին եւ այդ երևույթը բաժանում է երեք փուլի:

Առաջինը վերաիմաստավորված կապակցության առաջին անգամ կիրառության փուլն է: Այս փուլում սովորական կապակցությունները դուրս են գալիս իրենց իմաստային դաշտից եւ փոխադրվում նոր իմաստային դաշտ՝ ձեռք բերելով փոխաբերական իմաստ:

Երկրորդը դարձվածքի գործածման կայունությունն ձեռք բերելու փուլն է: Այս փուլում կապակցությունը գործածվում է որպես պատրաստի կերպով վերարտադրելի լեզվական միավոր, ինչպես նաեւ՝ տվյալ լեզվով խոսող հանրության կողմից: Վերաիմաստավորված եւ գործածման մնայունությունը ձեռք բերած կայուն բառակապակցությունը մտնում է ընդհանուր լեզու, եւ տեղի է ունենում նրա բաղադրիչների ճշգրտում:

Երրորդն արդեն իսկ ձեւավորված եւ հաստատված դարձվածքների փուլն է:

Չնայած այս երեք փուլերին՝ կան բազմաթիվ դարձվածքներ, որոնք ամենեւին էլ այս բոլոր փուլերը չեն անցնում, իսկ որոշ դարձվածքներ էլ ստեղծվում են միանգամից՝ որպես փոխաբերություններ (*տես Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան 1973, էջ 33—74*):

Դարձվածքների էությունը լիարժեք բացահայտելու համար անհրաժեշտ է դրանք քննել իրենց պատմական զարգացման մեջ, այսինքն՝ պարզել, թե դարձվածքները ինչ ձեւով են առաջանում լեզվում, ուսումնասիրել դրանց կազմավորման օրինաչափությունները:

Դարձվածային միավորների ծագման

ուսումնասիրության համար անհրաժեշտ է պարզել այն բառերի կազմը եւ հիմնական իմաստաբանական բնութագրերը, որոնցից կազմված են դարձվածքները:

Դարձվածքների բաղադրիչները կարող են լինել՝

- ուղիղ կամ փոխաբերական իմաստով կիրառված ինքնուրույնաբար հանդես եկող բառեր,
- հնացած իմաստներով բառեր,
- բառեր, որոնք լեզվի զարգացման տվյալ փուլում եւ տվյալ տարբերակում ինքնուրույն կիրառությունից զուրկ են եւ հանդես են գալիս միայն տվյալ դարձվածքների կազմում:

Լեզվի դարձվածքային կազմի հիմքն են ստեղծում առաջին խմբի բառերը: Դրանց մեջ կարելի է առանձնացնել այն հիմնական բառիմաստային խմբերը, որոնք առավել մեծ ակտիվություն են ցուցաբերում դարձվածակազմության մեջ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դարձվածքների կազմում հատկապես հաճախ են հայտնվում հետեւյալ բառիմաստային խմբերի միավորները՝

- գոյականներ՝ մարդկանց եւ կենդանիների մարմնի մասերի անվանումները (ստամոսիկ դարձվածքներ) եւ կենդանիների անվանումները (կենդանական դարձվածքներ),
- ածականներ՝ գունանիշ ածականները եւ չափային հատկանիշ ցույց տվող ածականները,
- բայեր՝ շարժում եւ խոսքի գործընթաց ցույց տվող բայերի բառիմաստային խմբերը: Հաշվի առնելով այն լեզվական մյուսը, որի հիման վրա առաջացել է դարձվածքը՝



կարելի է տարբերակել դարձվածակազմության հետեւյալ հիմնական տիպերը՝

- դարձվածքների կազմում ազատ բառակապակցություններից,
- հնարավոր դարձվածքների հիման վրա,
- հեղինակային արտահայտություններից,
- ժողովրդական բանահյուսությունից ծագող արտահայտությունների հիման վրա,
- այլ դարձվածքների հիման վրա,
- այլ լեզուների դարձվածքներից:

Շարունակությունը՝ էջ 8

Արեւմտահայոց խաչելության պատումը



Սկիզբը՝ թիվ 8—12
«Չսպիացած վերք» վեպում հեղինակի գեղագիտական իդեալը մարմնավորված է գլխավոր հերոսի կերպարով, որին տրված

անվանումներով եւս շեշտվում են նրա՝ մի կողմից կրոնական հանգամանքը՝ Շահեն Մեռնյան, մյուս կողմից՝ աշխարհիկ կացությունը՝ Գիմո Մեռնյան, երկու դեպքում էլ՝ Մեռնյան, ասել է թե՛ մաքուր, ամարատ։ Ունենալով համոզմունք կրոնամետ նկարագիր եւ եկեղեցական աստիճան՝ արեղա, լինելով եկեղեցու ծառայող, պատրիարքի հանձնակատար, պատարագներ վարող, հրաշալի սաղմոսներ երգող, խորանների մերթու եկմանը ու Կոմիտասին հնչեցնող՝ նա միեւնոյն ժամանակ լավատեղյակ է աշխարհիկ ու ազգային խնդիրներին։ Ընդհուպ այն աստիճանի, որ գիտակցում է զենքի եւ ուժի դերը ժողովրդական ինքնագոյության եւ ինքնապաշտպանության գործում, ավելին՝ ինքն անձամբ զենք է վերցնում ու մասնակից դառնում ժողովրդի ու հայրենի եզերքի ինքնապաշտպանական մարտերին։


Ողջ վեպի ընթացքում Գիմոն յուրատեսակ հանգույց է, որի մասնակցությամբ, ներկայությամբ կամ առնչությամբ տեղի են ունենում գործողություններ, դեպքեր, խոսակցություններ, մարդկային հարաբերություններ, որոնք ազդեցություն են հեղինակային շարադրանքը, այն դարձնում միասնական։ Իր ամբողջ էությամբ լինելով արվեստագիր անձնավորություն, սիրելով իր հարազատներին՝ նա պաշտամունքի աստիճանի մկրվածություն է ցուցաբերում այն ամենի նկատմամբ, ինչն առնչվում է հարազատ ժողովրդի կացությանն ու ճակատագրին։ Բարձր մտածողության տեր այդ մարդը թեւեւ ունի փխրուն հոգի, սիրասուն սիրտ, բայց անանձնական է իր ամեն մի քայլում,

իր անձով ու գործով հաստատում է բարության, արդարության ու նվիրման այն վեհ գաղափարները, հանուն որոնց պայքարում են մահվան գրկում հայտնված իր ազգակիցները։ Նրանում թեւեւ բախման մեջ չեն զգացնումքն ու միտքը, ազգային ու անձնականը, հոգեւորն ու աշխարհիկը, սակայն դրանցից որեւէ մեկին նախապատվություն տալու որոշումը հաճախ է ծառանում նրա առջեւ, մտածել տալիս, քանի որ մի կողմում կմային այն հարցերը, որոնք նույնքան *կարեւոր* էին, որքան որ *անհրաժեշտ*։ Եթե ամբողջովին նվիրվել իր սքեմին, ինչ պիտի լինեին իր աղոթքի խոսքերը, եւ ինչ պիտի խնդրեր ինքը, իսկ եթե աշխարհիկ գործերով զբաղվեր, չէր դատարկվելու իր ներաշխարհը...
Շարունակությունը՝ էջ 5

ՆՈՅ ՆԵՇԵՊԵՏ. պարսկ-բյո-ն, բէ առ-առապէլ

Սկիզբը՝ էջ 2
Ազնաբերդի, ինչպես նաեւ կենտրոնական եւ հյուսիսային Նախիջեւանի տարածքն ընդգրկող մյուս գյուղերի տեղաբնիկ խոսվածքներում առկա են հիշյալ հնչյունափոխության բազմաթիվ օրինակներ՝ աղջիկ > *ախճիկ* | *ախճիգ*, աղցան > *ախճան*, աղքատ > *ախկաղ*, դաղձ > *տախձ(ը)*, աղբիւր > *ախպուր*, եղբայր > *ախպէր*, ազբն > *ասպը*, բողկ > *պօխկ(ը)*, շաղգամ > *շախկամ*, գաղթական > *կախտագան*, թուրք > *թուխպ(ը)*, ազգ > *ասկ(ը)*, մաղձ > *մախձ(ը)*, ծաղկել > *ծախկիլ*, քաղցր > *քախժըր*, ժածք > *ժաշկ(ը)*, յաղթել > *ախտիլ*, դժոխք > *տըժօխկը*, Ասքանազ > *Ասկանազ*, մեղք > *մէխկ(ը)*, տախտակ > *տախտագ*, ապսպարել > *պըսպարիլ*, աստղ > *աստըղ*, տաշտ > *տաշտ* եւ այլն։ Համանման երեւոյթ է առկա նաեւ Զուղայի բարբառում. շփականից եւ հպականից կազմված զույգը բառամիջում եւ բառավերջում վերածվում է խուկ շփականից եւ շնչեղ խուկ կամ խուկ հպականից կազմված զույգի՝ աղջիկ > *ախջիկ*, աղցան > *ախցան*, աղքատ > *ախկատ*, դժոխք > *դը-ժոխկ*, աղտ > *կեղտ* > *յեխտ*, շաղգամ > *շախկամ*, ճեղք > *ճեխկ*, ազգ > *ասկ*, մաղձ > *մախց*, ծաղկել > *ծախկել*, հաղթել > *խախտել*, քաղցր > *քոխցըր*, ճոճք > *ճոճկ*, պղպշել > *պըրպշել*, աստառ > *աստառ*, տախտակ > *տախտակ*, աստղ > *աստըխ*, տաշտ > *տաշտ* եւ այլն։ Անգամ Ազուլիսի բարբառում, որի հնչյունական համակարգը մոտ է գրաբարի հնչյունական համակարգին, եւ բառամիջի բաղաձայնները գրեթե անփոփոխ են մնացել (արջ > *օռջ*, բրդոտ > *բըռոտ*, դաղձ > *դաղձ*, զարդարել > *զըռ-դարիլ*, թրջել > *թըռջիլ*, ասւ > *աղձ* եւ այլն), նույնպես առկա են կից բաղաձայնների վերոհիշյալ հնչյունափոխության երեւոյթներ՝ աղջիկ > *ախջիկ*, ճեղք > *ճեխկ*, աղցան > *ախցան*, աղքատ > *ախկաթ*, դժոխք > *դը-ժօխկ*, ծաղկել > *ծախկիլ* եւ այլն։
Հետեւաբար, չպետք է բացառել նաեւ այս վարկածը, որի համաձայն՝ բնականվարի նախնական ձեւը հենց *Նախիջեւան*ն է, քանզի ոչ շեշտակիր վանկում *ի* հնչյունի անկման հետեւանքով *Նախիջեւանը* կարող էր դառնալ *Նախջեւան*, ապա կից բաղաձայնների փոխազդեցական հնչյունափոխությամբ՝ *Նախճեւան*, այնուհետեւ՝ ձայնավորների ներդաշնակությամբ՝ *Նախճավան* (*Նախիջեւան* > *Նախջեւան* > *Նախճեւան* > *Նախճավան*)։ Այս վարկածի օգտին է խոսում նաեւ պարսկերենի *Նախջեւան* ձեւը, որտեղ նույնպես պահպանվել է հայերենի ջ հնչյունը, այլապես ճ-ի դիմաց պարսկերենը կունենար չ, ինչպես տեղի է ունեցել օրինակ, *Ճահուկ* (*Ճահկա*, *Ճահկան*) *բերդ* — *Չախխանդալե* դեպքում։
Այսօրվա Նախիջեւանում, որտեղ վերջին տասնամյակներում Զուղայի ժանկախոս խաչքարերը հիմնահատակ ոչնչացրած,

Ազուլիսի, Աբրակունիսի, Շոռոթի եկեղեցիները, տասնյակ ու հարյուրավոր այլ վանքեր ու տաճարներ հողին հավասարեցրած աղբեջանցիները հանկարծախառ «նո-յասիրությամբ» իրենց «ճաշակով» արագ վերակառուցել են Նոյ մահապետի դամբարանը՝ պաշտոնական հյուրերին ու զբոսաշրջիկներին հայկական վաղմջագույն քաղաքի հիմնադրի գերեզմանը ներկայացնելով որպես «աղբեջանական պատմամշակութային հուշարձան»։
Ի դեպ, մեր հարեւանների սերը Նոյ մահապետի հանդեպ սկիզբ էր առել դեռեւս մի քանի տասնամյակ առաջ՝ 1981 թվականին, երբ նրանք, անշուշտ, հիմնվելով հայկական սկզբնաղբյուրների վրա, հանկարծ



«գլխի ընկան», որ «իրենց» քաղաքը 5650 տարեկան է՝ Երեւանից ավելի քան երկու անգամ հին, եւ նույնիսկ հորելյանը նշելու փորձեր արվեցին. քաղաքի տարբեր տեղերում այդ բովանդակությամբ պատահական անձաշակություններ հայտնվեցին, համապատասխան «պարզաբանումներ» հայտնվեցին նաեւ զբոսաշրջիկների համար նախատեսված ուղեցույց-քարտեզներում՝ մոռանալով, որ «պատմության» «թանգարանում» «աղվանական մշակույթի հուշարձանների» անվան տակ ցուցադրված հայկական հուշարձանների կողքին տեղ էին հատկացրել նաեւ «Նոյի գերեզմանը» մակագրությամբ լուսանկարին։
Այնինչ, Նոյի դամբարանը անհիշելի ժամանակներից է գոյություն ունեցել իր անվամբ իսկ համաշխարհային ջրհեղեղի իրողությունը հաստատող հիմնավորց հայկական Նախիջեւան քաղաքում։
Արտակ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐՂՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ



Սկիզբը՝ թիվ 9—12
50 000 հայ ռազմիկներ, որոնց թվում՝ համալսարանականներ, մասնակցեցին Բելառուսիայի ազատագրմանը, որոնցից 15 000-ը զոհվեց մարտերում։ Նրանցից շատերը սխրանքների համար պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով, իսկ 11 հայորդի արժանացավ խորհրդային Միության հերոսի կոչման (*տես Յայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, էջ 660*)։ Նրանց թվում էր Առաջին մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար գեներալ Յովհաննես Բաղրամյանը։ Բելառուսիայի ազատագրման մարտերում աչքի ընկնելու համար «Վիտեբսկյան» անվանում շնորհվեց 51-րդ գվարդիական (նախկին Յայկական 76-րդ) հրաձգային դիվիզիային։ Նրա երեք հրաձգային գնդերին շնորհվեց «Պոլոցկյան» անվանում։ Ուկրաինայի եւ Բելառուսիայի ազատագրման մարտերում աչքի ընկան տասնյակ հազարավոր հայ մարտիկներ, այդ թվում նաեւ համալսարանականներ։ Նրանց թվում էին Իվան Վեբիլովը, Նիկոլայ Յովհաննիսյանը, Գեորգ Տեր-Գասպարյանը, Ասքանազ Կարապետյանը, Յայկ Թումանյանը, Համազասպ Բաբաջանյանը, ավիացիայի մարշալ Արմենակ Խանփեդյանը (Ալեքսանդր Խուդակով) եւ ուրիշներ։
Բազմաթիվ հայորդիներ ակտիվորեն մասնակցել են նաեւ Լենինգրադի, Մերձբալթյան հանրապետությունների, Կարելիայի, խորհրդային Անդրբեյեռի համար մղված մարտերին։ Լենինգրադի եւ Մերձբալթիկայի համար մղված կռիվներում հերոսաբար զոհվեց խորհրդային Միության երեսու, գրոհային ավիացիոն հրամանատար փոխգնդապետ Նելսոն Ստեփանյանը, որին հետմահու շնորհվեց խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչում։
Մերձբալթիկայի ու Բելառուսիայի ազատագրման եւ Արեւելյան Պոլսիայի գրավման համար մղված մարտերում կրկին աչքի ընկավ ակաճավոր զորավար Յովհաննես Բաղրամյանը, որն իրական

մացրեց մի շարք դժվարին, բայց փայլուն գործողություններ։ Մերձբալթիկայում աչքի ընկած հայ զորավարներից է նաեւ գվարդիայի գեներալ-մայոր Սերգեյ Կարապետյանը։ Նրա ղեկավարած դիվիզիան անձնուրացությամբ եւ մեծ հոգատարությամբ ազատագրեց Էստոնիայի Տարտու քաղաքը, որի համալսարանում սովորել էր խաչատուր Աբովյանը։ Այդ մարտերում վճռականորեն հանդես եկան նաեւ 51-րդ գվարդիական դիվիզիան եւ «Սասունցի Դավիթ» տանկային շարայումը, որը կառուցվել էր հիմնականում սփյուռքահայության տրամադրած միջոցներով։ Այդ տանկային շարայումը ստեղծելու համար Մերձավորարեւելյան երկրներում կազմակերպվեց համազանկություն՝ ԵՊՀ-ի հայ ժողովրդի պատմության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Աշոտ Աբրահամյանի ջանքերով։ 1944 թ. աշնանը գերմանական զավթիչները վերջնականապես վճռվեցին խորհրդային երկրի սահմաններից, եւ մարտերը փոխադրվեցին Գերմանիայի ու նրա դաշնակիցների տարածքները։ խորհրդային բանակը ձեռնամուխ եղավ ֆաշիզմի լծի տակ տառապող եվրոպական ժողովուրդներին ազատագրելու իր պատմական առաքելության իրականացմանը, հիտլերյան բանակի ջախջախմանն ու Բեռլինի վրա հաղթանակի դրոշի բարձրացմանը։ Այդ մեծագույն պատմական խնդիրները կատարվեցին 1944—1945 թթ. ձմռան եւ գարնան հարձակողական գործողությունների ընթացքում։ 1945 թ. ապրիլի 30-ին Բեռլինի վրա բարձրացվեց կարմիր դրոշ, իսկ երկու օր հետո գրավվեց Գերմանիայի մայրաքաղաքը։ Մայիսի 8-ին ֆաշիստական Գերմանիան անվերապահ կապիտուլյացիայի ենթարկվեց։ Թշնամուն իր սեփական հողում ջախջախելու համար խորհրդային բանակի մղած մարտերում նույնպես անձնուրաց մասնակցություն ունեցան հայկական զորամասերն ու հայ ռազմիկները։
Շարունակությունը՝ էջ 7

Արեւմտահայոց խաչելութեան պատումը

Սկիզբը՝ էջ 4

Եկեղեցուն, ապա կնոջը՝ Բերթային ու զավակին, իսկ հետո ուսուցչությանն ընծայաբերած նրա նվիրումներն ի վերջո անգոր են դառնում շատ ավելի մեծ մի սիրո, ծառայության ու պարտականության առջեւ՝ զենք վերցնել եւ կռվել ժողովրդի գոյատեւման համար՝ հասկանալով, որ տարագրումը մահ է, կռվելն էլ մահ է, բայց այդ կռվի մեջ թշնամու մահն էլ կա, եւ ուրեմն՝ պատվով մահ է: Գինդը որոնում ու չի գտնում այն հարցի պատասխանը, թե ինչու իր ժողովրդի անցած դաժան ճանապարհը նրան չի դարձրել միատարր, անբաժանելի մի ձուլվածք: Չէ՞ որ գրկանքն ու տառապանքը պետք է որ մաքրեին նրա հոգին, հստակեցնեին միտքը, հարստացնեին կենսափորձը, գործունեության վճռականության հանգեցնեին: Չգտնելով իրեն տանջող հարցերի պատասխանը, գինդը ազդեցիկ համոզմունքով ժողովրդական պայքարի գործին՝ Գինդը, այնուամենայնիվ, հոգով ու էությանը շարունակում է մնալ հոգեւորական. կրակում է ու չի ուզում մարդ սպանել, անգամ սարսափում է այն մտքից, որ կարող է մեկին վիրավորել, ամեն անգամ կրակելիս ամբողջ էությանը դողում ու ցնցվում է՝ արդյո՞ք մարդ սպանվեց:

Տարաբնույթ իրադարձությունների բովում հեղինակը հաճախ է դիմում իր հերոսին. «Գինդ, Գինդ, հագիր սքեմդ», որը նշանակում է հավատարիմ եղիր ազգիդ, ժողովրդիդ, հայրենյաց հավատքին: Սքեմ, որ չի նշանակում պատյան կամ սահմանափակում, այլ ճիշտ հակառակը՝ ազատության հագուստ: Եվ Գինդն էլ հենց այն անձն է, որ չի ուզում ճանաչել եւ չի հանդուրժում եւ ոչ մեկին, ով այդ նվիրումների հավատավորը չէ: Գինդի սքեմապաշտությունը չի նշանակում, որ նա լոկ պարզ հավատացյալ է: Նրա աստվածը ընծա ծառայությունն ամենից առաջ ուղղված է իր ժողովրդի փրկության գործին եւ հաստատում է մի ճշմարտություն. ոչ թե ժողովուրդն է հավատքի համար, այլ հավատքը՝ ժողովրդի, եւ ամեն մի հոգեւորական ոչ այնքան պիտի ծնրադրի խորանների առջեւ, որքան կանգնի իր ժողովրդի կողքին:

Վեպում միանգամայն համոզիչ է հնչում Գինդի վճիռը՝ զենք վերցնել: Ազգասիրական ոգով համակված Գինդն իր ժողովրդի սիրո համար արդեն հեռացել էր իր սիրած եակից ու որդուց՝ չդառնալով ամուսին ու հայր: Գինդը համոզվել էր, որ խնդրագրերը, խոստումները, դաշինքներն ու պայմանագրերը ոչինչ չեն տալիս իր ժողովրդին: Եվ հիմա, երբ նա ակամատեսն էր ծերերի, երեխաների, կանանց նկատմամբ իրականացվող անխնա մախճիրի, չի կարող ամփոփվել իր կրոնական զգացումները՝



րի մեջ եւ մի կողմ քաշվել ժողովրդի գոյամարտից:

Թուրքական իշխանությունների կողմից Զնչական կուսակցության քսան գործիչներին կախաղանի դատապարտման առթիվ ունեցած զրույցում գերմանացի Վանգենհայմը մի ուրիշ գերմանացու՝ Ֆայնբերգին ասում է, որ թուրքերը ողջ հայ ժողովրդին կախելու «ոչ անտառանյութ, ոչ պարան» ունեն եւ «արտաքսելու ձեւն են մտածել»: Իսկ Ֆայնբերգը նրան հարցնում է՝ նա ճանաչե՞լ է Գինդին, եւ ինքն էլ տալիս կախվածների ստույգ բնութագիրը. «Գինդեր էին նրանք՝ այդ կախվածները»: Ասել է՝ էությանը, արտաքինով ու հոգով ամառատ մտավորականներ, հավատավորներ էին կախվածները, ինչպես որ ներքուստ մի հեղափոխական հոգի էլ Գինդն էր:

Նա, ում ամենափրած էությունը Զիսուն է, իրականում դժբախտ մի հայ է, ով կորցնում է իր ողջ գերդաստանը, զրկվում ընտանեկան երջանկությունից՝ կնոջից ու զավակից, հավատի իր եկեղեցուց ու իր տարագիր ժողովրդից: Գինդի ու նրա ժողովրդի աստվածները հեռացել էին նրանից: Նրանց պիտի հետեւեին նաեւ Գինդն ու իր հավատապաշտ ժողովուրդը՝ նույնպես սրբագործելով իրենց անցած ուղին ու հիշատակը:

Արմենակի որդիներից մեկը՝ Նվիրակը, որ Գերմանիայում կրթություն է ստացել եւ այժմ աշխատում է որպես երկաթգծի շինարար, այն մտայնությունների կրողն է, ըստ որի՝ դիմադրական գործունեության դիմելը կործանարար կլինի ժողովրդի համար: Ողջ վեպի ընթացքում նա անում է ամեն ինչ՝ այս կամ այն կերպ օգնելու եւ կամ փրկելու

համար իր ազգակիցներին, ազնվորեն կատարում իր աշխատանքային պարտականությունները, սակայն այդպես էլ չի գտնում իր դավանած խոհեմությանը նրանց աքսորվելուց ու սպանվելուց փրկելու ուղիները եւ, ի վերջո, ինքն էլ է ապավինում զենք վերցնելու գաղափարին:

Այաջաջանը վեպում կերտել է ժողովրդի ծոցից դուրս եկած մի շարք ազատատենչ մարդկանց գրավիչ ու հարազատ տիպարներ: Նրանցից մեկը Նանեն է՝ Ֆնդիճաքի տանուտեր Մինասի կինը: Վրիժառու այդ հայուհին իր 5 որդիներին կռվի է մղում, անձամբ զենք վերցնում ու մարտնչում թուրքական կանոնավոր զորքերի դեմ: Դավատապաշտ այդ կինը, որ ամեն առավոտ Աստվածածնի պատկերի առջեւ աղոթք էր անում, հուսահատությունից հողի տակ է թաղում սրբի նկարը՝ իր հոգում եւս թաղելով վերուստ եկող օգնության ու փրկության հույսը: Առ Աստվածամայրն իր աղոթքներից մեկում նա խնդրում է պահպանել իր ամուսնուն ու որդիներին, Ֆնդիճաքին պատուհասած երաշտից ազատվելու համար անձրեւ թափանձում. «Աղաչում եմ,— աղոթեց նա,— Աստվածամայր, լսիր ինձ, ես էլ կին եմ եւ մայր: Դու հիմա ունեիր (ըստ աստվածաբանական որոշ դավանանքների՝ Մարիամը, Քրիստոսից զատ, ունեցել է նաեւ այլ զավակներ), ես էլ հիմա ունեմ: Քո մեկը, Զիսունը, Աստուծոց էր, իմ հիմա էլ Մինասից եմ» (Այաջաջան Ստ., «Չսպիացած վերք», հ. III, գիրք 1-ին, եր., 1993, էջ 5):

Նանեն իր որդիներին հավասարեցնում է Աստվածամոր որդու հետ: Ասել է՝ ամեն մի մոր համար իր զավակները մի-մի Զիսուն են, եւ նրանց մահը սրբացում է:

Ազատագրական պայքարի անմնացորդ նվիրյալ է Պետրոսը: Բռնապետական կյանքի բերումով ֆիդայի դարձած Պետրոսը, որին ստիպողաբար թուրքական բանակ են զորակոչել ու տարել ռազմաճակատ, սթափ գիտակցելով, որ ծառայում է իր ժողովրդին լլկողների ուժերում, փախչում է եւ զենք վերցնում՝ պաշտպանելու տանջահար ժողովրդի կյանքը: Կռիվների մեջ թրծված Պետրոսն անցնում է տառապանքների երկար ճանապարհներ, Ֆնդիճաքի անկումից հետո էլ իր զենքը վայր չի դնում, ռազմական իր իմացությունները կիրառում կռվի այլ դաշտերում:

Պետրոսից ոչ մի բանով հետ չի մնում հարմանդո (ջորեպան) Ավետիքը: Բնության այդ ազատ զավակը, Ֆնդիճաքի անտառների, լեռների ու կածանների հմուտ գիտակը իր երկրի սիրով է լեցուն, խիզախ ու համարձակ մարդ է, որ ելել է՝ հրդեհներից լաց լինող անտառները, հրկիզվող հայրենի հողն ու նրանց զրկում ապրող մարդկանց թուրք ճուռակների (անգղա-ընտանիքների մագիլակիր թռչուններ, որոնք, ի տարբերություն ցեղակիցների, իրենց զոհերին որսում են ոչ միայն օդում ու գետինն, այլեւ ջրերում) ճիրաններից պաշտպանելու համար: Ինքնապաշտպանական մարտերի ժամանակ նա հայտնվում է ամենուրեք, կռվում ամենադժվարին դիրքերում եւ հավատացած է, որ միայն զենքին փարվելով է, որ կարելի է փրկել ոչ միայն ազգային արժանապատվությունը, այլեւ ազգային գոյությունը, այն գոյատեւումը, որը ենթադրում է հայրենական հողի վրա մնալ ու ապրել:

Կովկասյան ռազմաճակատ տարված Մեսրոպը, որին թուրքերը Մուսրեբ անունն էին տվել, հոգեկան ծանր ողջապանքների մեջ է հայտնվում: Զեռվում թողած իր սիրտուն կնոջը՝ Ծավիին, ու մեկ տարեկան որդուն՝ Վահին, նա պարտադրված է իրեն տրված հրացանով կրակել. «Ո՛ւմ վրա եմ կրակում, ո՛ւմ դեմ: Ռուսի՛, հայի՛, վրացու՛, կոզակի՛: Աստված մի արասցե, որ մարդ սպանվի իմ գնդակով...» (Այաջաջան Ստ., «Չսպիացած վերք», հ. II, գիրք 3-րդ, եր., 2019, էջ 316):

Իրենց ժողովրդի ողբերգական ճակատագրի կրողներն են նաեւ հայ հոգեւորականները: Վեպում համոզեւ եկող Զուսիկ քահանան, Պսակ քահանան եւ մի շարք այլ կրոնավորներ տարագրության նույն ճանփաներով են քայլում, խոշտանգվում ու սրախողխող լինում, նահատակվում՝ իրենց հավատին, ուխտին ու ժողովրդին հավատարիմ մնալով:

Շարունակելի

Արծրուն ԱՎԱԳՅԱՆ

Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Արվեստագետ, որի օւրբակը աշխարհին պատմում է մեր անցյալի ու մշակույթի մասին

«Կարելուր չէ, թե ինչպես կտատանվեմ տարբեր լեզուների միջեւ, ես մնում եմ հայ, բայց եվրոպացի հայ, ոչ ասիացի հայ: Ուրիշ հայ կոմպոզիտորիների հետ մենք կստիպենք եվրոպային եւ աշխարհին լսելու մեր երաժշտությունը: Եվ երբ նրանք լսում են մեր երաժշտությունը, մարդիկ վստահորեն ասում են. «Պատմե՛ք մեզ այդ ժողովրդի մասին, ցոյց տվե՛ք երկիրը, որ այդպիսի արվեստ է ստեղծում»:

Արամ Խաչատրյան

Ընծա կոմպոզիտորն իր այս խոսքերով նախանշեց 20-րդ դարի հայ դասական երաժշտության ընթացքն ու ուղին: Արամ Խաչատրյանի ստեղծած դարոցով դաստիարակված, նրա երաժշտական ավանդույթները կրող մեր մյուս նշանավոր կոմպոզիտորները համաշխարհային ասպարեզ մտան՝ իրենց սեփական դրոշմով: Նրանք, իսկապես, ստիպեցին աշխարհին լսելու մեր երաժշտությունը... Նրանք աշխարհի բեմերից հնչեցնում են հայ երգն ու

երաժշտությունը՝ մարդկությանը պատմելով Զայաստանի մասին: Եվ նրանց լսելով՝ շատերն են փորձում աշխարհի քարտեզին որոնել մեր փոքր, բայց մշակութային ժառանգությամբ մեծ երկիրը, երկիր, որ տվել է Ներսես Շնորհալի, Գրիգոր Նարեկացի, Կոմիտաս, Արամ Խաչատրյան...

Սա շատ լավ գիտեն տաղանդաշատ հայ արվեստագետները, եւ իրենց առաքելություններից մեկը համարում են հայ մշակույթն աշխարհին ճանաչելի դարձնելը: Եվ այդ հրաշալի արվեստագետներից է ջութակահար, մենակատար, մանկավարժ Ռուբեն Կոստյանը:

Ռուբեն Կոստյանի երաժշտական ուղին սկսվել է այն ժամանակ, երբ դեռ ինը տարեկան էր, երբ ելույթ ունեցավ Կրեմլում: Զետո նրան ընդունեցին միջազգային բազմաթիվ հեղինակավոր բեմերն ու դահլիճները: Այսօր նրա անունը լսելի է աշխարհի բազմաթիվ երկրներում՝ Ռուսաստան, Գերմանիա, Ֆրանսիա, ԱՄՆ, Իրան, Կանադա, Մեքսիկա, Թայվան, Մալազիա, Վրաստան...

Նրան մեր մշակութային ժառանգությունը փոխանցողը եւ երաժշտության

առաջին դասեր տվողը եղել է հայրը՝ Ալեքսանդր Կոստյանը (ալտահար, մենակատար, անասնաբույժ, սիմֆոնիկ նվագախմբերի կոմպոզիտորայտեր, մանկավարժ, ԶԶ վաստակավոր արտիստ Ալեքսանդր Կոստյանը մեր մշակույթի այն երեւելիներից է, որի անունը կապված է Կոմիտասի անվան պետական լարային քառյակի հետ: Նա 1990 թվականից քառյակի ալտահարն է եղել):

Չորս տարեկան էր Ռուբենը, երբ հայրիկի օգնությամբ սկսեց բացահայտել երաժշտության մեծ աշխարհը: Խոսելով հոր մասին՝ Ռուբեն Կոստյանն իր բոլոր հարցազրույցներում ասում է.

— Որքան շատ ժամանակ է անցնում, այդքան ավելի եմ համոզվում, որ իմ հայրն առանձնահատուկ երաժիշտ եւ մանկավարժ է: Իր ձայնագրությունները Զայաստանի ազգային ռադիոյի ոսկե ֆոնդում են, աշակերտներն էլ մեն հաջողությունների են հասել: Զայրս է ինձ սովորեցրել կատարողական արվեստի սկզբունքները, որոնց անդրադառնում եմ մինչ այսօր:

Ռուբեն Կոստյանը որպես մենակատար

համոզեւ է զալիս տարբեր նվագախմբերի հետ: Իր բոլոր համերգների ժամանակ, որտեղ էլ որ դրանք տեղի են ունեցել, եվրոպացի կոմպոզիտորների ստեղծագործությունների կողքին կատարել է նաեւ հայ կոմպոզիտորների գործերը:

Ռուբեն Կոստյանը 2000 թվականից Քիշ կղզու «Հաուզ օֆ մյուզիկ Էնդ քալչը» կազմակերպության դասական երաժշտության բաժնի ղեկավարն է: 2010 թվականից ապրում է Կանադայում: Նրա առաջին կանադական ելույթը տեղի ունեցավ դիրիժոր Նուրիան Արմանի եւ «Սիմֆոնիա Թորոնթո» նվագախմբի հետ՝ համրահայտ Գլենն Գուլդ Սթուդիո դահլիճում, այնուհետեւ՝ Քլորներ Զոլում:

Մի առիթով Ռուբեն Կոստյանն ասել է.

— Ուրիշ շատ երաժիշտների նման ես էլ ինձ աշխարհաբաղաբացի եմ զգում, քանի որ երաժշտությունը համամարդկային շփման միջոց է:

Բայց այս խոսքերի հետեւում թաքնված է իրական հայրենասերը, որը երբեք չի խզում կապը Զայաստանի հետ:

Շարունակությունը՝ էջ 6, 8

ՑՆՈՐԱԿԱՆ ՏԵՐՅԱՆԸ

Սկիզբը՝ էջ 3

Արցախի ազատագրությամբ ապրած հերոսներ, գաղափարախոսներ, իրականության շաղկապը ելած նորոշյալ շահագործողներ, այլևայլ դեմքեր՝ մուրացկանից, երթողային տաքսիների վարորդներից մինչև պատգամավորներ եւ երկրի ղեկավարներ:

Ինձ համար այս ողբերգական-զավեշտալի-ծիծաղելի ու տխուր իրականությունը մեկ ծիծաղելի դեմք ունի՝ հեզմանք, ծաղր եւ ծաղրունձանակ: Ըստ իս՝ ժամանակը երգիծանքին է: Այդպես էր նաեւ Տերյանի ժամանակ: Ահավասիկ:

*Անդարծ կորել է սրտիս խնդունը,
Թունոտ մի մեզ է իջել հոգում իմ.
Ստածունները թախիծ ու թոյս են,
Գալիքը սեւ է, որպես խոկուն իմ:*

*Աշխարհը անգութ եւ ահավոր է,
Եվ ի՞նչ է սերը — անգոր մանուկ մի.
Չարն է հաղթողը, չարն է հզորը,
Թախիծն անգոր է, եւ սերն անօգ է...*

*Մեր կյանքը դառն է, մեր օրը մութ է,
Անգոր են, զուր են վեճն ու կասկածը.
Բոլորը ծաղր է, բոլորը սուտ է,
Չարն է, որ տեր է, չարն ինքն աստված է:*

Ծաղրվածք ինքը պիտի ծաղրի, ծաղրվածք հենց իրականությանն ուղղված ծաղր է: Այս բանաստեղծության օրինակով արձանագրենք մի առանձնահատկություն: Որքան էլ Տերյանը խորապես պատկերավոր մտածող է, բայց երբեք պատկերը չի ճնշում, խոսքն ասես մերկ լինի՝ ասելիքի բովանդակային շեշտադրության աստիճանի: Որոշիչն ասելիքն է, գաղափարն է, որ հազուն է բառե շապիկ՝ խոսքի իմաստային միջուկը բորբոքող պատկերավորությունը:

Տերյանական բարձր ներշնչանքի այլազան արտահայտությունները շատ են, որ լրացնում, մի նրբագծով ամբողջացնում են նախկին տրամադրությունները: Եվ դրանց մեջ՝ «Երկրից քո հավետ հեռու...», «Ոսկե-հանդերձ եկար եւ միգաթող...», «Գիմով եմ, զինով եմ ես էլ...» բանաստեղծությունները...

Ցավալի է, որ Տերյանի ժառանգությունն ամբողջական գիտական հրատարակության դեռ չի արժանացել: Պահոցը տարտղմված է, կան նաեւ պակասող ինքնագրեր: Դա այլ ծանր մտահոգություն է: Ուներ նաեւ ծրագրեր՝ մտադիր էր գրել «Դոն Ժուան» վերնագրով պոեմ եւ վեպ՝ մտավորականության կյանքից:

Առանձին քննության նյութ է «Տերյանը թարգմանիչ» հարցը: Թարգմանել է Ալբերտ Շնիցլեր, Էմիլ Վերհարն, Վալերի Բոյուսով, Օսկար Ուայլդ, Շարլ Բոդլեր, Դանթեի Դոնաթո Դոնաթո, Պոլ Վերլեն, Սաֆո, Ռաբինդրանաթ Թագոր, Ֆեոդոր Սոլոգուբ, Վյաչեսլավ Իվանով, Շոթա Ռուսթավելի, Ակակի Ծերեթելի: Ընդ որում, Տերյանը ոչ միայն ինքն է թարգմանել, այլեւ կազմակերպել է թարգմանական աշխատանքը, առանձնացրել թարգմանության արժանի հեղինակներին ու գրքերը, ստեղծել թարգմանիչների խումբ՝ ներգրավելով Պողոս Մակինցյանին, Կարեն Միքայելյանին, Ստեփան Զորյանին եւ ուրիշներին:

Ժ. Բանաստեղծության ճանապարհը

Թունանյանը, ինչպես ասացինք, փակեց Աբովյանի բացած փակագիծը: Գրականության մասին նրա շատ իմաստուն դատողությունները վերաբերվում են ժողովրդական, բանահյուսական գանձերի օգտագործմանը: Թունանյանն իր ժողովրդախոսակցական լեզվով, բանահյուսական նյութով, ինչպես Տերյանը բնորոշեց, մնաց «ուճիկում»: Բայց շարունակվեց Թունանյանի բնաշխարհիկ փիլիսոփայությունը եւ եկավ ու մարմնավորվեց Դամոն Սահյանի մեջ: Թունանյանին «արթնացնելու» փորձեր շատ են եղել, բայց միշտ էլ դատապարտվել են: Թունանյանի ոգին վերամարմնավորվել է մեկ Բակունցի մեջ (պատմվածքները), մեկ Սահյանի, որը գտավ այն լեզուն, որով Թունանյանը խոսում էր բնության հետ: Խոսքը ոչ թե լեզվի՝ ճի մասին է, այլ հաղորդակցության գաղափարների:

Մինչեւ նախորդ հարցի՝ Տերյանին վերաբերող հատվածին անդրադառնալը, պատասխանեմ Ձեր միջանկյալ հարցադրմանը: Հաղորդակցության գաղտնագիրը նյութի հետ խոսելու ձեւն է, որ վերածվում է բառի ու պատկերի: Դա արյան ներքին շրջանառության պես մի բան է, որ Թունանյանից անցավ Բակունցին ու Սահյանին, Տերյանից՝ Չարենցին, Չարենցից՝ Սեւակին: Ավելի հեռու՝ «Աստվածաշունչ» մատյանից՝ 5-րդ դարի հայոց ապաշխարանքի երգերին, այդտեղից՝ Նարեկացուն, Նարեկացուց՝ հետագա շրջանի ամբողջ հայ քերթությանը: Սա տեսակի սերմն է, սաղմն է, հունդն է, կորիզն է, սա ազգային Բանն է, այն, որ ի սկզբանե էր:

Հարցի պատասխանը որոշակիացնենք Տերյան—Չարենց առնչության շուրջ: Տերյանի ակնարկած գալիք օրը հենց Չարենցն էր: Իսկ Չարենցն իր կանխատեսումները ձեւակերպեց «Յոթ խորհուրդ գալիքի երգասաններին» քերթվածում, որի ուղղակի հասցեատերը Սեւակն է, իսկ հետագա շրջանի ավելի մոտերի համար կենդանի է նրա խոսքը. «Հիմի շատ եմ երգիչները — հոգու ուզած տաղը չկա»:

Գրականությունը որքան կանխատեսումների հնարավորություն է ընձեռում, նույնքան էլ որեւէ հզոր անհատականության հայտնությամբ այդ կանխատեսումներին մոր կերպարանք է տալիս: Տերյան—Չարենց հարազատ եւ օրինաչափ կապը որքան էլ տեսնում ենք Սեւակի, նաեւ Էմինի մեջ, բայց դա սոսկ ուղղություն, ուղղվածություն է եւ ոչ թե արժեքային համակշիռ: Տերյանը շատ բարձր գրական պահանջներ էր ներկայացնում նախ իրեն, ապա իր գրական շրջապատին: Դաժան էր հակագրականության հանդեպ: Այս տեսակետից մի եզակի մոնուշ է Ցոլակ խանգաղյանին հասցեագրած 1914 թ. հունվարի նամակներից մեկը, որի մեջ պատշաճ վերաբերմունք է պահանջում «իսկական» գրականության հանդեպ, ընդդեմ հովանավորվող անիսկականի՝ «եղծարարների կեղծ ստեղծածների»: Սա նրա



համար «հասարակական տեսակետ է», գրողի եւ գրականության «արժանապատվության» հարց:

Հայ գրականությունը ռուսերեն թարգմանելու անհրաժեշտության բերումով, ինչպես արդեն նշել են, անգամ Մուրացանին, Նար-Դոսին եւ այլոց նկատի ունենալով, գրում է. «Ենթադրյալ ասած, ես անձամբ այդ բոլոր գրողներին տալիս եմ կուլտուրական նշանակություն, բայց գեղարվեստական՝ ոչ...» (IV, 271): Ահա մեկ այլ գնահատական. «Եթե «Պեպո»-ն ռուսացնես, նա հետաքրքրական չէ ռուսին՝ այդպես է ասում ամենից առաջ Գորկին, որ կարծես ռուս է» (IV, 271):

Շարունակությունը՝ էջ 7

Արվեստագետ, որի ջուրբակը աշխարհին պատմում է մեր անցյալի ու մշակույթի մասին

Սկիզբը՝ էջ 5

Հաճախ է վերադառնում՝ իր անմնացորդ նվիրումն ու ներդրումը բերելով հայրենի մշակութային կյանքի զարգացմանը:

Կոստանյանների ընտանիքում բոլորն էին մշակույթի բարձր արժեքների կրողներ, ճշմարիտ արվեստը սիրողներ: Եվ դա չէր կարող չփոխանցվել այդ միջավայրում մեծացող Ռուբեն Կոստանյանին: Ռուբեն Կոստանյանը, հետադարձ հայացք ուղղելով իր անցած ուղուն, ասում է.

— Իմ ստեղծագործական կյանքի ճանապարհին ունեցած ձեռքբերումներիս ընթացքում ճակատագրական դիպվածները քիչ չեն եղել... Դա միայն մեկ պահ չէր... Շատ գործոններ են նպաստել, կարծում եմ՝ նաեւ գենետիկան: Մեր ընտանիքում բոլորը կամ երաժիշտ են, կամ սիրում են եւ շատ լավ գիտեն երաժշտությունը: Հորական պապս գյուտարար էր, բայց նաեւ լավ հասկանում էր երաժշտությունը: Սորական պապս ճարտարապետ էր. նա գրեթե ամբողջ օպերային երաժշտությունն անգիր գիտեր: Տատս լավ ձայն ուներ եւ հաճախ էր ինձ համար երգում: Մինչեւ հիմա հիշում եմ նրա ձայնը: Մայրս շատ լավ երաժիշտ է՝ կետադրյա փորձով, աշխատել է Օպերային նվագախմբում, Հայաստանի պետական ռադիոյի նվագախմբում, Հայաստանի ֆիլհարմոնիկում:

Իսկ հայրիկիս՝ Ալեքսանդր Կոստանյանի ձայնագրությունները մտնում են Հայաստանի պետական ռադիոյի ոսկե ֆոնդի մեջ: Դրանք խորենացու եւ Նարեկացու շարականների սեփական փոխադրություններն



են: Հայրս նպաստել է գրեթե բոլոր ժամանակակից հայ կոմպոզիտորների հաստատվելուն եւ ճանաչմանը՝ կատարելով եւ ձայնագրելով նրանց ստեղծագործությունները:

Մանկությունս անցել է երաժշտական մթնոլորտում: Ճանաչում էի Հայաստանի գրեթե բոլոր պրոֆեսիոնալ երաժիշտներին, որոնք հաճախ էին գալիս մեր տուն

...Մինչեւ օրս հիշում եմ, թե ով ինչպես էր նվագում, ինչ խառնվածք ուներ... Հիշում եմ նրանց խոսակցությունները երաժշտության եւ արվեստի մասին:

Այսպես է սկսվել Ռուբեն Կոստանյանի ստեղծագործական կյանքի ճանապարհը: Աշխարհի մեծ բեմերը նվաճած արվեստա-

գետն այսօր նաեւ դասավանդում է՝ մոր սերնդին պատգամելով երբեք չկտրվել մեր ազգային մշակույթից եւ նպաստել դրանց պահպանմանն ու տարածմանը, որովհետեւ միայն այդպես կարող են ստեղծել սեփական մշակութային դեմք՝ աշխարհի հռչակավոր երաժիշտների շարքում:

— Ազգային ակունքները բազմաթիվ պայմաններից մեկն է ստեղծագործությունը համամարդկային շարքին դասելու համար,— հաստատում է նա:

Երախտագիտությամբ հիշելով իր ուսուցիչներին՝ Իզոր Օլստրախին, Տիգր Կարգալին, Ռուբեն Ահարոնյանին, ժամ Տեր-Մերկերյանին, Իվան Մոնիգետին, Դոմինիկ դը Վիլիենկուրին, ասում է.

— Ամեն մեկը բեմական ահռելի փորձ ուներ: Նրանցից յուրաքանչյուրի հետ շփվելով՝ իմացա պրոֆեսիոնալ նրբություններ, որոնք միայն երկարատեւ բեմական փորձի միջոցով հնարավոր է ձեռք բերել: Այդ մեծերի հետ ոչ միայն մասնագիտական շփումը, այլեւ ընկերություն անելն օգնեց շատ բաներ հասկանալուն:

2019 թվականը մեծ հոբելյանի տարի էր. լրացավ հայ երգահան, երգիչ, երաժշտագետ, վարդապետ եւ ուսուցիչ, բանահավաք, խմբավար, մանկավարժ, հայկական ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր, մեծն Կոմիտասի ծննդյան 150-ամյակը: Հայ մշակույթի նվիրյալ արվեստագետների համար սա եւս մեկ առիթ էր միջազգային հանրությանը ներկայացնելու Կոմիտասի ժառանգությունը:

Շարունակությունը՝ էջ 8

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

Սկիզբը՝ էջ 4

Հայ ժողովրդի հազարավոր զավակներ՝ որպես ազատարարներ, անցան եվրոպական մի շարք պետությունների սահմանները եւ ազնվորեն կատարեցին իրենց սրբազան պարտքը: Ավելի քան 20 հայ գեներալներ՝ իրենց միավորումներով, հետապնդեցին ու ջախջախեցին Գերմանիային եւ նրա դաշնակիցներին՝ իրենց իսկ տարածքներում: 409-րդ Կիրովգրայան եւ 89-րդ Թամանյան դիվիզիաները մասնակցեցին ինչպես Լեհաստանի, Չեխոսլովակիայի, Բուլղարիայի, Հարավսլավիայի ազատագրմանը, այնպես էլ Գերմանիայի, Ռումինիայի, Հունգարիայի, Ավստրիայի թշնամական խմբավորումների ջախջախմանը: 89-րդ դիվիզիան խորհրդային բանակի միակ զուտ ազգային զորամիավորումն էր, որը մասնակցեց Բեռլինի գրավմանը եւ պատերազմն ավարտեց Էլբայի ափին: Դա մեծ պատիվ էր հայկական դիվիզիայի համար, քանի որ կարմիր բանակի զորամիավորումներից միայն նրան էր պատմական այդպիսի կարեւոր առաջադրանք տրվել:

Ռազմաճակատի զորքերի առաջապահ խմբի կազմում 89-րդ Թամանյան դիվիզիան, ապրիլի 16-ի առավոտյան անցնելով հարձակման, համառ մարտերում կոտրելով հակառակորդի դիմադրությունը, շարժվեց դեպի ֆաշիստական Գերմանիայի մայրաքաղաք՝ ճանապարհին գրավելով Օդերի Ֆրանկֆուրտ քաղաքը եւ բազմաթիվ բնակավայրեր: Ապրիլի 29-ին հայկական դիվիզիան արդեն փողոցային մարտեր էր մղում Բեռլինում: Գործելով գրոհային ջոկատներով՝ դիվիզիան համառ մարտերով առաջ էր շարժվում դեպի Բեռլինի կենտրոնը՝ Ռայխստագի շրջան, որտեղ Հունբուրգ-Հայն ալգուն հանդիպեց հակառակորդի պաշտպանական երկաթե ստինն հզոր ամրություններ ունեցող բերդի կայազորի կատաղի դիմադրությանը: Դիվիզիայի հզոր հարվածների տակ մայիսի 2-ին ժամը 14:00-ին, ամրոցի կայազորն անձնատուր եղավ: Դիվիզիայի զորամասերը գերի են վերցրել հակառակորդի 5 112 զինվոր ու սպա, գրավել հարուստ ռազմավար (*Մույն տեղում, էջ 660*):

Բեռլինի գրավումը մեծ ցնծություն առաջ բերեց հաղթող զորքերի մեջ: Օդ թռան հազարավոր հրթիռներ, թնդացին հաղթական կրակոցներ եւ ուռաներ, որոնց ձայնը խլացվեց Ռայխստագի պատերի տակ՝ հայկական բռնաբարի պարողների խորխուրտ դուփումին եւ զուռնադիլին զիլ նվագի ներքո: Բեռլինի ճակատամարտում ցուցաբերած սխրանքների համար դիվիզիան պարգևատրվել է «Կուտուզովի երկրորդ աստիճանի շքանշանով»՝ դառնալով եռակի շքանշանակիր: Բեռլինյան մարտական գործողությունների հնուտ ղեկավարման համար գերալ-մայոր Նվեր Սաֆարյանը նույնպես արժանացել է «Կու-



տուզովի երկրորդ աստիճանի զորավարական շքանշանի»:

Հազարավոր հայորդիներ, նրանց թվում՝ համալսարանականներ, մասնակցեցին ֆաշիզմի լծից Լեհաստանի, Ռումինիայի, Բուլղարիայի, Հարավսլավիայի, Հունգարիայի, Չեխոսլովակիայի, Ավստրիայի եւ Գերմանիայի ազատագրման մարտերին: Միայն Լեհաստանի համար մղված մարտերում խորհրդային Միության հերոսի կոչման արժանացավ 18 հայորդի, իսկ 8 շարքային զինվոր դարձավ «Փառքի շքանշանի» լրիվ ասպետ: 10 հայ հերոսացավ ֆաշիստական Գերմանիայի ջախջախման եւ Բեռլինի գրավման մարտերում:

Չեխոսլովակիայի ազատագրության տարեգրության մեջ ոսկե տառերով է գրված 73-րդ հրաձգային կորպուսի հրամանատար գեներալ-լեյտենանտ Սարգիս Մարտիրոսյանի անունը, որի զորքերը առաջինների թվում 1945 թ. մայիսի 9-ին մտան Պրահա: Կորպուսի գործողությունները հմտորեն ղեկավարելու եւ այդ ընթացքում ցուցաբերած խիզախության համար Սարգիս Մարտիրոսյանին շնորհվեց խորհրդային Միության հերոսի կոչում:

Մայիսի 9-ին ավարտվեց Հայրենական մեծ պատերազմը: Հայ ռազմիկներն իրենց արժանի ավանդը ներդրեցին նաեւ Հեռավոր Արեւելքում ֆաշիստական Գերմանիայի դաշնակից միլիտարիստական ճապոնիայի ջախջախման գործում: Չնայած 1941 թ. ապրիլի 5-ին չեզոքության պայմանագիր էր ստորագրվել ԽՍՀՄ-ի եւ ճապոնիայի միջեւ, բայց վերջինս ֆաշիստական Գերմանիայի կողմից ԽՍՀՄ-ի վրա հարձակվելուց հետո մշտապես օգնում էր նրան եւ հաղաղակիանության ռազմական թատերաբեմում ծանր կորուստներ պատճառում հակաֆաշիստական խմբավորման երկրների զինված ուժերին: ճապոնական ռազմածովային ԽՍՀՄ հեռավորարարության սահմանների մոտ կենտրոնացրել էին միլիոնանոց Կվան-

տունյան բանակը՝ դրանով իսկ կաշկանդելով կարմիր բանակի զգալի ուժեր, որոնք շատ անհրաժեշտ էին խորհրդա-գերմանական ճակատում: Իր դաշնակցային պարտավորություններին հավատարիմ ԽՍՀՄ-ն օգոստոսի 9-ին պատերազմ հայտարարեց ճապոնիային: Նույն օրը կարմիր բանակի Անդրբայկալյան, Առաջին եւ երկրորդ հեռավորարարական ռազմաճակատների զորքերը հաղաղակիանության մավատորմի մի եւ Ամուրյան գետային մավատորմի ղեկավարությամբ մարտական գործողություններ սկսեցին ԽՍՀՄ-ի հեռավորարարական սահմանների մոտ կենտրոնացված ճապոնական խոշոր զորախմբի դեմ: Սրընթաց հարձակման հետեւանքով կարճ ժամանակամիջոցում գլխովին ջախջախվեց Կվանտունյան բանակը: խորհրդային զորքերը մինչեւ օգոստոսի վերջը ճապոնական զավթիչներից ազատագրեցին Հյուսիսարեւելյան ու Կենտրոնական Հիմաստանի եւ Հյուսիսային Կորեայի տարածքները, Հարավային Սախալինը ու Կուրիլյան կղզիները: 1945 թ. սեպտեմբերի 2-ին մարտնչող կողմերը ամերիկյան «Միսսուրի» գեամավի տախտակամածի վրա ստորագրեցին ճապոնիայի անվերապահ կապիտուլյացիայի ակտը, որով եւ ավարտվեց երկրորդ համաշխարհային պատերազմը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի այդ եզրափակիչ մարտական գործողությանը խորհրդային բանակի շարքերում ակտիվ մասնակցություն ունեցան հայ ժողովրդի մի քանի հազար զավակներ, այդ թվում՝ մեկ տասնյակից ավելի համալսարանականներ, որոնց զգալի մասը մինչ այդ մարտնչել էր խորհրդա-գերմանական ռազմական գործողությունների թատերաբեմում: ճապոնիայի ջախջախման գործում աչքի ընկավ Անդրբայկալյան ռազմաճակատի 12-րդ օդային բանակի հրամանատար ավիացիայի մարշալ Սերգեյ Խուդյակովը (կրմնակ խանփերյանցը):

12-րդ օդային բանակի գործողությունները հմտորեն ղեկավարելու համար նա պարգևատրվեց «Կուտուզովի առաջին աստիճանի շքանշանով»: Կվանտունյան բանակի ջախջախման եւ Հարավային Սախալինի ազատագրման գործում մեծ դեր կատարեց Հեռավորարարական երկրորդ ռազմաճակատի հրետանին, որի հրամանատարը խորհրդային Միության հերոս հրետանու գեներալ-լեյտենանտ Միքայել Պարսեղովն էր: Ռազմաճակատի հրետանու գործողությունները հմտորեն ղեկավարելու համար նա պարգևատրվեց «Սուվորովի երկրորդ աստիճանի շքանշանով»: Նույն ռազմաճակատի հակաօդային պաշտպանության պետ հրետանու գեներալ-մայոր Գեորգ Չալախյանը՝ նույնպես համալսարանական պարգևատրվեց «Կուտուզովի երկրորդ աստիճանի շքանշանով»: Նման պարգևի արժանացավ նաեւ երկրորդ հեռավորարարական ռազմաճակատի բժշկասանիտարական վարչության պետ բժշկական ծառայության գեներալ-լեյտենանտ Ավետիք Բուռնուկյանը (*Մույն տեղում, էջ 662*):

Ցուցաբերած խիզախության համար «Սուվորովի երկրորդ աստիճանի շքանշանով» պարգևատրվեց 215-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, խորհրդային Միության հերոս, համալսարանական, գեներալ-մայոր Անդրանիկ Ղազարյանը: Լայնահուն Ամուր գետն առաջինների թվում հաջողությամբ հաղթահարելու եւ չինական քաղաքներն ազատագրելու մարտերում ցուցաբերած սխրանքների համար «Սուվորովի երրորդ աստիճանի շքանշանով» պարգևատրվեց 361-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար գնդապետ Առաքել Հովհաննիսյանը: Չանչուն եւ Մուկդեն քաղաքների ազատագրման գործում կարեւոր դեր կատարեց 278-րդ հրաձգային դիվիզիան, որի հրամանատարը գնդապետ Կոնստանտին Լազարյանն էր: Դիվիզիան արժանացավ «Խիմզանյան» պատվավոր անվան, իսկ նրա հրամանատարը պարգևատրվեց մարտական «Կարմիր դրոշի շքանշանով»: «Կարմիր դրոշի շքանշանով» պարգևատրվածների թվում էին նաեւ 10-րդ օդային բանակի հրամանատարի տեղակալ ավիացիայի գեներալ-մայոր Գրիգոր Տոլմաշյանը, 6-րդ զվարդիակական տանկային բանակի ռազմական խորհրդի անդամ տանկային զորքերի գեներալ-լեյտենանտ Հայկ Թումանյանը, ծովային օդաչու Վազգեն Վարդանյանը, տանկիստ Սերգեյ Մկրտչյանը, Սախալինյան ռազմական մավատորմի շտաբի պետ առաջին կարգի կապիտան (հետագայում՝ փոխծովակալ) Վալերիան Սուրաբեկյանը եւ շատ ուրիշներ (*Մույն տեղում, էջ 663*):

Շարունակելի

Էդիկ ՄԻՆԱՍՅԱՆ
Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ՑՈՒՄԿԱՆ ՏԵՐՅԱՆԸ

Սկիզբը՝ էջ 3, 6

Մեր մշակութային վիճակը Տերյանն իրավացիորեն պայմանավորում է մեր ժողովրդին պատուհասած աղետալի վիճակով. «Թշվառ ու դժբախտ ժողովուրդ ենք մենք եւ այդ չգիտենք ու չենք ուզում ընդունել, եթե գիտենք, կամ եթե ընդունում ենք, ցավող սրտով չենք ընդունում, այլ տանջանքից փախչելու եւ մեր ապիկարությունն արդարացնելու համար ենք ընդունում» (IV, 273):

Տերյանը դեմ էր այն զանգվածային դարձող մշակույթին՝ որպես հակամշակույթ, ինչը, ժամանակի ընթացքում տարածվելով, եկավ հասավ մինչեւ մեզ եւ դարձավ դրության տեր: Այդ իսկ պատճառով նա ամեն կերպ բարձր արվեստի պահանջ էր դնում: Այդ իսկ պատճառով նա, ով իր գրածի համար գոնե պիտի ամաչի, այսօր մրցանակ

ու փառք է ուզում: Այդ նպատակով Տերյանը մեծ կարեւորություն էր տալիս լուրջ քննադատությանը: Մինչդեռ միջավայրն աստիճանաբար իջեցնում էր չափանիշերը:

Տերյանի «Հայ գրականության գալիք օրը» գեկուցման դիրքերից այսօր հայացք պիտի ուղղենք նաեւ ժամանակակից հայ քննադատությանը, հայ գրական մամուլի ողբալի վիճակին:

Բայց կամ արդյոք ժամանակակից հայ քննադատություն... Ինչ էլ որ հանդես է գալիս որպես այդպիսին, քննադատություն չէ, այլ ամենաթույլ գրողների աստիճանակարգ ստեղծող եւ նրանց «ոսկեջրող» դեղին լորձունք: Ահա թե մեր մրցանակապաշտ բանաստեղծներն ու արձակագիրները, թատերագիրներն ու մանկագիրները մինչեւ ուր իջեցրին քննադատության խազը կամ ձողիկը: Անպատիվ քննադա-

տություն, որ գրամոլին գրող է հռչակում, պատեհապաշտին գրականության մեջ շրջագայելու հնարավորություն է տալիս, խմբագրում ու առաջաբանում հերթական ապաշնորհ պաշտոնային «երկրի ժողովածուն», որ այլ բան չէ, քան մահացու ծանաղագրություն:

Քննադատության հիմնական արատները, որից զուլացնում էր Տերյանը, հետեւյալներն են՝ համակերպվածությունը, հաշտվողականությունը, գրապատմական հայացքի բացակայությունը, տեսական-գեղագիտական ինքնուրույն համակարգի չգոյությունը: Հասուն, լուրջ գրական միջավայրի կարոտը երազանք մնաց: Ներկան անհեռանկար էր, որովհետեւ արժեքային համակարգ եւ չափանիշ չէին գործում, իսկ զարգացումների ընթացքը՝ հուսահատեցնող...

Ստավոր մեկուսացումը հաղթահարելու նպատակով ինչպես Տերյանը, այնպես էլ Չարենցը ստեղծեցին իրենց գրական միջավայրը: Տերյանի համար «Գարուն» ամսանախի շուրջ համախմբվածներն էին (Պ. Մակինցյան, Ց. Խանգադյան, Կ. Միքայելյան եւ ուրիշներ), Չարենցի համար՝ մախ «Երեքի» խումբն էր (Ա. Վշտունի, Գ. Աբով), հետո՝ «Standarted»-ը (Մ. Մազմանյան, Կ. Հալաբյան), այնուհետեւ՝ «Նոյեմբերը» (Մահարի, Բակունց, Արմեն եւ ուրիշներ), իսկ վերջում՝ հեռակա առկաները՝ Նարեկացին, Աբովյանը, Թումանյանը, Տերյանը, նաեւ Դանտեն, Գյոթեն, Պուշկինը...

Շարունակելի

Դավիթ ԳԱՄԴԱՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Արվեստագետ, որի ջութակը աշխարհին պատմում է մեր անցյալի ու մշակույթի մասին

Սկիզբը՝ էջ 5, 6

Եվ ահա Ռուբեն Կոստյանը եւս իր կարեւոր ներդրումը բերեց այս հորեյլանական միջոցառումներին՝ մեծարժեք ծայրասկավառակի տեսքով. տարեսկզբին Սանկտ Պետերբուրգում լույս է տեսել նրա ջութակի եւ դաշնամուրի համար փոխադրությունների առաջին ժողովածուն՝ նվիրված Կոմիտասի 150-ամյակին, որտեղ տեղ գտան Կոմիտասի, Ֆ. Լիստի, Պ. Չայկովսկու, Ս. Ռախմանինովի ստեղծագործությունների փոխադրությունները:

— *Համոզված եմ՝ Կոմիտասն իր ամուր տեղն է զբաղեցնում համաշխարհային երաժշտության մեջ՝ թողնելով մեծ ժառանգություն:* Կոմիտասի փոխադրումները մտադիր եմ կատարել տարբեր բեմերում, բայց առաջին հերթին հայկական միջնադարյան եկեղեցիներում եւ ծայրագրել...

Մոտ ապագայում լույս են տեսնելու երեք ժողովածու եւ մեկ ծայրասկավառակ, որոնց մեջ կընդգրկվեն Ալեքսանդր Կոստյանի փոխադրությամբ երեք շարական՝ իր իսկ կատարմամբ, եւ մի շարք իր փոխադրություններից, այդ թվում՝ Կոմիտաս: Հայաստանում մի քանի ուսումնական հաստատություններ արդեն օրինակներ են պատվիրել:

— *Հայաստանում գտնվելով՝ ծայրագրել եմ մի մեծ ծրագիր,*— ասում է երաժիշտը, — *բազմաթիվ ելույթներ եմ ունեցել դաշնակահարներ Նատալյա Մնացական*



նյանի եւ Մարգարիտա Գրիգորյանի հետ: Պայմանագրեր կան տարբեր լեյբլների հետ՝ ծայրասկավառակներ թողարկելու նպատակով:

Ռուբեն Կոստյանի նվիրական ծրագրերը շատ են, եւ ամեն նվիրական ծրագիր կյանքի կոչելիս նա առաջնորդվում է այս կարեւոր սկզբունքով.

— *Իմ համոզմամբ՝ ամեն գործ պետք է հասցնել կատարողական լավագույն վիճակի: Կատարել եւ շարունակում եմ կատարել Արամ Խաչատրյանի, Կարեն Խաչատրյանի, Էդուարդ Բաղդասարյանի, Էդվարդ Միրզոյանի, Ղազարոս Սարյանի, Էդուարդ Հայրապետյանի, եւ ուրիշ հայտնի հայ կոմ-*

պոզիտորների ստեղծագործությունները: Էդուարդ Հայրապետյանի Կրկնակի կոմպերտը կատարել եմ հորս՝ Ալեքսանդր Կոստյանի հետ՝ դիրիժոր Մերուժան Սիմոնյանի ղեկավարությամբ: Բազմաթիվ անգամ կատարել եմ Ղազարոս Սարյանի Զութակի կոմպերտը նվագախմբի հետ: Ժամանակին հենց հեղինակի հետ նվագել ենք այդ գործը: Կարեն Խաչատրյանի Զութակի սոնատը նվագելիս նույնպես հանդիպել եմ հեղինակի հետ: Նա պատմել է ծայրագրությունների մասին՝ Դավիդ Օյստրախի եւ Լեոնիդ Կոզանի հետ, թե ինչպես է ստացել նամակ Յաշա Չեչեցից, որտեղ նա սոնատի նոտաներն էր խնդրում եւ մտադրու-

թյուն ուներ այն ծայրագրելու: Կարեն Խաչատրյանի սոնատը ծայրագրեցի Նատալյա Մնացականյանի հետ (ինչպես նաեւ Արամ Խաչատրյանի՝ ջութակի եւ դաշնամուրի համար գրած գրեթե բոլոր ստեղծագործությունները)՝ նիդեռլանդական «Brilliant classics» լեյբլի համար: Զայնասկավառակը թողարկվեց 2018-ին: Նվագախմբի հետ բազմաթիվ անգամներ կատարել եմ Արամ Խաչատրյանի Զութակի կոմպերտը: Նախատեսում եմ ծայրագրել նաեւ Է. Միրզոյանի, Է. Բաղդասարյանի ստեղծագործությունները՝ ամերիկյան լեյբլի պատվերով:

Հայաստանից դուրս իմ ելույթների ժամանակ հայ կոմպոզիտորների գործերը հիանալի են ընդունվում հանդիսատեսի կողմից:

...Ռուբեն Կոստյանի հետ զրույցի ընթացքում մտածում էի. հնարավոր է արդյոք, որ արվեստագետը բնակվի արտերկրում, բայց ապրի Հայաստանում: Պարզվում է՝ հնարավոր է, եւ դա հատուկ է իսկական նվիրյալին: Բազմաթիվ երկրների հանդիսատեսների սրտերը նվաճած, հեղինակավոր դահլիճներում լավագույն ջութակներով նվագած արվեստագետն ու մանկավարժն այսօր իր նպատակներից մեկն է համարում Հայաստանում ավելի հաճախ հանդես գալը եւ իրենց քայլերը նոր սկսող հայ երաժիշտների կողքին լինելը, նրանց օգնելը...

Պատրաստեց Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆԸ

ՀՈՎՀԱՆԵՍ ԻՐԱՆԻԱՆԿԵՐՏՅՈՒ «ՊԼՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿԻ ԴԵԶՎԱԾՔՆԵՐԸ

Սկիզբը՝ էջ 3

Դարձվածքի կազմումը ազատ բառակապակցությունից տեղի է ունենում երկու ձևով՝

— ազատ բառակապակցությունների փոխաբերական վերափոխատավորմամբ,

— ազատ բառակապակցությունների փոխանվանական վերափոխատավորմամբ:

Փոխաբերական վերափոխատավորումը լեզվի դարձվածային ֆոնդի հարստացման կարեւորագույն աղբյուրն է եւ հիմնված է երկու առարկաների, երեսույթների եւ հասկացությունների միջեւ նմանության վրա:

Փոխաբերական վերափոխատավորումը կարող է լինել լրիվ կամ մասնակի: Լրիվ վերափոխատավորված են, օրինակ, հետեւյալ դարձվածքները՝ *ակն ունել* (220), *ծեռս ի գլուխ ելանել* (356), *ծեռներեց առնել* (248) եւ այլն:

Մասնակի փոխաբերական վերափոխատավորման հետեւանքով են առաջացել հետեւյալ դարձվածքները՝ *կտուրն ի միմեանց լինել* (180), *ի լոյս ածել* (8) եւ այլն:

Փոխանվանական վերափոխատավորման հիմքում ընկած են առարկաների միջեւ եղած կցորդական զուգորդությունները, այն է՝ պարունակողի գործածումը պարունակալի փոխարեն, գործողությունը՝ արդյունքի փոխարեն, հատկանիշը՝ առարկայի փոխարեն եւ այլն: Օրինակ՝ *արեան ճապաղիս հեղուկ* (290), *արկանել գտուր թշմամութեան* (10), *բառնալ մինջ արտեւանաց* (218) *ծածուկ Արուօն* (266), *տալ կերակուր սրոյն* (254) եւ այլն:

Ժամանակակից հայերենում դարձվածքները հաճախ պատճենվում են ռուսերենից կամ ռուսերենի միջոցով, իսկ գրաբարում դրանք հիմնականում պատճենումներ էին հին հունարենից, ասորերենից եւ պարսկերենից:

Այսպիսով՝ դարձվածակազմության տիպերը քննվող լեզուներում մոտավորապես նույն կենսականությունն ունեն, առավել հաճախ դարձվածքներ են կազմվում ազատ բառակապակցությունների եւ հավանական դարձվածքների հիման վրա: Այս օրինաչափությունը պայմանավորված է ներլեզվականորեն:

Հայերենում դարձվածքներն առաջանում

են նույն հիմունքներով (նախ՝ բանավոր խոսքում, ապա՝ կայունացում գրավոր լեզվում), ինչ մյուս լեզուների դեպքում, դարձվածքի ծնունդը ընդհանրական կաղապարներ ունի այն տարբերությամբ միայն, որ հայերենում առավել բազմազան են հեթանոսական եւ քրիստոնեական հավատքների, եկեղեցու, հասարակության բարքերի, սովորույթների, պատմական ավանդույթների հետ շաղկապված դարձվածքները: Հայերենում առավել հաճախ դարձվածքները կազմվում են ազատ բառակապակցություններից եւ հավանական դարձվածքներից (*տես Սկրտչյան Ռ., Ժամանակակից հայերենի ձեւաբանական ոճագիտություն, Երեւան, 1992, էջ 141—143*):

Դարձվածքները գեղարվեստական խոսքի կառուցման կարեւորագույն բաղադրիչներ են՝ օժտված ոճական մեծ ներուժով, որի միջոցով ասելիքը դառնում է տպավորիչ եւ ներազդու ընթերցողի հոգում ու մտքին: Դարձվածքների հարուստ պաշարով առանձնանում է գրաբարով ավանդված մատենագրությունը, որում տեղ գտած դարձվածքների գիտական ամբողջական քննությունը դեռեւս կատարված չէ: Ի տարբերություն արդի հայերենի՝ գրաբարի դարձվածքները ցարդ ենթարկվել են միայն մասնակի դիտարկումների եւ վերլուծությունների: Արդի արեւելահայերենի դարձվածաբանությանը նվիրված աշխատություններում տրվում են դարձվածքների գիտական ձեւակերպումը, շարահյուսական գործառնությունները եւ ոճական դրսեւորումների արժեւորումը:

Անշուշտ՝ նրանցում տեղ են գտել նաեւ առանձին դիտարկումներ գրաբարի եւ միջին հայերենի դարձվածքների մասին, որոնք օգնում են արդի հայերենի դարձվածքների ծագումնաբանական եւ իմաստակառուցվածքային հատկանիշների հենքային վերլուծությանը: Սակայն, ինչպես նշում է Ռ. Ղազարյանը, «Գրաբարի դարձվածաբանությունը, թույլ է, թէ անսպառ է» (*Ղազարեան Ռ., Գրաբարի դարձվածաբանական բառարան, Երեւան, 2012, էջ 10*), ուստի նրա գիտական բազմակողմանի քննությանն ուղղված յուրաքանչյուր ուսումնասիրություն

կարեւորվում է՝ պայմանավորված հետեւյալ համագամքներով:

Գրաբարով ավանդված մատենագրության լեզվաոճական բնութագիրը չի կարող լինել ամբողջական՝ առանց դարձվածքների իմաստակառուցվածքային եւ ոճական արժեւորման, ըստ որում՝ նրանց գործառնությունը յուրաքանչյուր բնագրում առանձնանում է՝ պայմանավորված բնագրի բովանդակությամբ, ժանրային առանձնահատկությամբ եւ հեղինակի լեզվամտածողությամբ:

Նոր գրական հայերենի դարձվածքների ծագումնաբանական քննությունն ամբողջանում է միայն գրաբարի դարձվածքների բազմակողմանի ուսումնասիրությամբ:

Դարձվածքների տարածմանակալ քննությունը ձեւակերպում է պատմական ոճագիտության կարեւոր հիմնահարցերից մեկը. գեղարվեստական խոսքի յուրաքանչյուր բաղադրիչ կարեւորվում է լեզվի պատմության ընթացքում ձեւավորված իմաստագործառնական իր նկարագրով, որի հենքի վրա տրվում է լեզվական միավորների ոճական առանձնահատկությունների պատմական գնահատականը:

Գրաբարի դարձվածքների բազմակողմանի վերլուծությունը հիմք է դառնում պատմական դարձվածաբանության համար, որի քննության ժամանակ համարվում են դարձվածքների համաժամանակյա ուսումնասիրության արդյունքները, եւ արտացոլվում է դարձվածքների ձեւավորման եւ զարգացման պատմությունը:

Դարձվածքներն ունեն կենսական մեծ ուժ, որի շնորհիվ գրաբարի դարձվածքների գերակշռող մեծամասնությունը մասնակի փոփոխություններով պահպանվել է լեզվի զարգացման հաջորդ փուլերում:

Գրաբարի դարձվածքների իմաստային, կառուցվածքային եւ ոճական վերլուծությունը գրաբարով ավանդված բազմաժանր գրականության մեջ կօգնի ներկայացնել գրաբարի լեզվամտածողության անսպառնական հնարավորությունները եւ դրանց տեղայնացումը ցանկացած երկրում:

Աշխատանքի այս հատվածում կատարել ենք Հովհաննես Դրասխանակերտցու կիրառած դարձվածքների իմաստային

դասակարգում: Որպես սկզբնաղբյուր ենք ընտրել «Ուսանողի գրադարան» մատենաշարի 1996-ին հրատարակված Հ. Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց» աշխատությունը, որն իր մեջ ներառում է եւ գրաբար, եւ աշխարհաբար տարբերակները: Երկը գրաբարից աշխարհաբար է թարգմանել Գ. Բ. Թոսունյանը, որը մեծագույն վարպետությամբ է կատարել այդ աշխատանքը եւ հիմնականում պահպանել Դրասխանակերտցու լեզվաոճական առանձնահատկությունները: Մեր բոլոր հղումները կատարել ենք այս հրատարակությունից՝ սկզբնաղբյուրի էջերը նշելով օրինակների կողքին:

«Պատմութիւն Հայոց» երկից դուրս ենք գրել մոտ երկու հարյուր դարձվածք, որոնք դասակարգել եւ բնութագրել ենք ըստ գերադաս առիթի մշակականության՝ բացառաբար, թե բառապաշարի իմաստային-թեմատիկ որ խմբին է պատկանում դարձվածքաստեղծ տվյալ միավորը:

Շարունակելի

Սամվել ԵՐԻԱՉԱՐՅԱՆ

ՔՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝

«Քրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Ստամբուլցյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հեռախոս՝ (010) 517 280

Էլ. փոստ՝ qristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝

krishayas.wordpress.com

Ստոր. տպագր. 16.07.2020 թ.

Տպաքանակը՝ 1175